

## Հիմնադիր և հրատարակիչ՝

«Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ

## Խմբագրական խորհուրդ՝

### Նիկոլայ Առուստամյան - (Նախագահ)

Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարի տեղակալ

### Աշոտ Հայրապետյան - «Հայաստանի

Հանրապետության արդարադատության

նախարարության իրավաբանական

ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրեն

### Վոլոդյա Հովհաննեսյան - Հայաստանի

Հանրապետության սահմանադրական

դատարանի անդամ, իրավաբանական

գիտությունների թեկնածու, դրցենտ

### Ռուզաննա Հակոբյան - Գավառի պետական

համալսարանի ռեկտոր, իրավաբանական

գիտությունների թեկնածու, դրցենտ

### Կարեն Սարգսյան - Ռուս-Հայկական

(Մյափոնական) պետական համալսարանի

իրավաբանական ֆակուլտետի դեկան,

իրավաբանական գիտությունների թեկնածու,

դրցենտ

## Խմբագիր և սրբագրիչ՝

### Արմենուիլի Հայրապետյան

## Համարի պատասխանատու՝

### Գրիգոր Մինասյան - «Հայաստանի

Հանրապետության արդարադատության

նախարարության իրավաբանական

ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրենի իրավական

հարցերով տևակալ, իրավաբանական

գիտությունների թեկնածու

## Համարի վրա աշխատել են՝

Սեղա Գինոսյանը, Արեն Ալոյանը

## Խմբագրության հասցեն՝

375010, ք. Երևան, Մ.Խորենացի 162<sup>րդ</sup>

հեռախոս 574406

Ֆաքս 574453

E-mail: [lawinstitute@justice.am](mailto:lawinstitute@justice.am)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. Ո-ՌԵՎԱՆԸ ՀԱԿՈԲՅԱՆ

Սահմանադրական պատասխանատվության  
ինստիտուտ.....3

### 2. ԾՈՒՅԱՆ ԴԱՅՄՈՅԱՆ

Մարդու պատվի և արժանապատվության  
պաշտպանության իրավական կարգավորման  
առանձնահատկությունները ՀՀ-ում.....10

### 3. ԱՆԴՐԻՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆ

Անցումային ժողովրդավարության իրավաբանագիտական  
մարտակրավելմերը.....19

### 4. ԹԱՎՈՒՐՈՒ ԾԱԶԱՐՅԱՆ

Իրավաբանական անձանց վարչական  
պատասխանատվության որոշ հիմնահարցեր.....23

### 5. ԱԻԴԱ ԻՍԿՈՅԻ

Конституционно-правовое обеспечение экологических прав  
граждан и устойчивое развитие: европейский опыт.....27

### 6. ԱՆԻԱ ԿՈՐԴՈՎԱ

Международное сотрудничество в сфере реформации  
уголовно-правового законодательства с целью  
противодействия современной преступности.....36

### 7. ՐԱՓԱՇԼԻ ԱՐԱՊԵՏՅԱՆ

«Писатель Ф. Достоевский о правовой защите детей».....39

### 8. ԼՈՍԻՆԵ ՕՂԱՆԵՍՅԱՆ

Юридическое лицо как субъект преступления в уголовном  
праве зарубежных стран (Англия, Франция, США).....47

### 9. ԱԾՅ ԲԵՐԵԲՐՅԱՆ

Значение мотивов психопатической самоактуализации  
при совершении субъектом противоправных действий.....51

10. Օտարերկրյա որդեգրման գործընթաց.....57

11. Հայաստանի Հանրապետության արդարադատության  
համակարգում ստեղծվել է թարգմանությունների  
կենտրոն.....61

12. Հայաստանի Հանրապետության արդարադատության  
նախարարության իրավաբանական ինստիտուտը  
հանձնվել են վկայականներ.....63

**Մ**իրենի բնիքեցող, հարավոփոխ այս դարաշրջանում յուրաքանչյուր նոր նախաձեռնություն միանշանակալվում, այն ունենում է ինչպես համակիրներ, այնպես էլ՝ մոլի հակառակորդներ: Ի խահույս եմ, որ մեր այս նախաձեռնությունը՝ համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ձեռք կրերի անհրաժեշտ վարկանիշ, քանզի այն բխում է ոչ միայն մասնագետ իրավաբանների գուտ գործնական շահերից, այլև կողմանը է իրավական խրբին հարցերի առնչությամբ որոշակի ծառայություններ մատուցելու մեր բաղարացիներին, բարձրացնելու նրանց իրավելվածությունը օրենադրության ոլորտում և ճանաչելի դարձնելու մեր երկրի իրավական համակարգը՝ միջազգային ասպարեզներում:

Համոզված եմ նաև, որ հանդեսը չի ունենալու որևէ կոնկրետ ուղղվածություն, այն բաց է լինելու բոլոր տեսակի գիտական տեսակետների ու դիրքորոշումների համար, անկախ այն հանգամանքից, թե դրանք որրանով են համակունչ լինելու ներ գերատեսաշական շահերին: Առաջարկող պահանջները սահմանափակվելու են բացառապես գիտական շափանիշներով, ինչը՝ բացառելու է խոտանը:

Ոչ միայն քաջածանք են երկրում՝ իրավագիտության ոլորտում գոյություն ունեցող բոլոր գիտական հանդեսներին, այլև՝ ուժերիս ներածին շափով նպաստել ու նպաստելու են դրանց կայացմանը և հետագա առաջընթացին. ընդ որում, մեծ մասի խմբագրական խորհրդի անդամ եմ: Ուստի, առավել քան հանողված պետք է լինեմք, որ սույն հանդեսը կոչված է նպաստելու իրավական թեմաներով բանավեճերն ավելի խորիմաստ և հիմնարար դարձնելուն, հետազոտնան պարզ նաև այնպիսի առանցքային հարցադրումներին ուղղելուն, որոնք հասկանալի պատճառներով համեմատաբար բիշ են լուսաբանվել:

Հարկ է նշել, որ արդարադատության նախարարության համակարգն ընդգրկում է, այնպիսի նմերականույցներ, որոնք իրենց կարգավիճակով ու գործունեության բնույթով խիստ առանձնահատուկ են, իսկ դրանց վերաբերյալ համայնք տեղեկատվություն և գիտահետազոտական նյութեր կարող են պատրաստել ու ընթերցողներին ներկայացնել հատկապես՝ հենց այդ օդակի աշխատողները:

Ակնհայտ է, որ արդարադատության նախարարության համակարգն ընդգրկում է, բազմաբնույթ կառույցներ, որոնց գործունեության համակողմանի հետազոտությունն ու գիտագործնական անհրաժեշտ խորությամբ լրացրանելն օրվա հրամայականն է, քանզի դրանք սերտորեն առնչվում են յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության և պարզապես առօրյա կյանքում ճիշտ կողմնորոշվելու հետ: Այս հանդեսը նաև խիստ արմեքավոր ամրիուն կլինի՝ դատափրավական բարեկայումների բարյ ու երատապ հարցերով հասարակական լսումներ ու քննարկումներ կազմակերպելու կտրվածքով:

Հանդեսի ծննդյան առթիվ շնորհավորում են բոլոր իրավաբաններին, գիտագործնական հանդեսի խմբագրական խորհրդին և մատթում ստեղծագործական ամենահանգ հաջողություններ: Միաժամանակ, իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ անձնակազմին՝ սույն հանդեսի ստեղծման գործում ցուցաբերած հետևողականության և ջանափրության համար:

Ակնկարում եմ, որ նախկին նմանաբնույթ հանդեսների ստեղծման ու կայացման փորձի համակողմանի վերլուծության արդյունքում այս նախաձեռնությունը գերծ կմնա բոլոր բացասական երևույթներից և յուրաքանչյուրի համար կդառնա հիրավի գիտական արժեք ներկայացնող բազմարուվանդակ տեղեկատու:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**



## ՈՈՒԶԱՆԱՀԱԿՈԲՅԱՆ

Գավառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դրցենտ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

**Դ**արեր շարունակ փիլիսոփայական, իրավաբանական մտքի խոշոր ներկայացրիչների ուսումնասիրման առարկան են եղել անձի ազատության ու պատասխանատվության, քարոյական և իրավական պարտրի հիմնահարցերը: Մասնավորապես, պատասխանատվության ու պատժի մասին դատողություններ հանդիպում ենք չին փիլիսոփաներ Կոնֆուցյանի և Շան Ցանի աշխատություններում, մ.թ.ա. VI-IV դարերում: Իրավաբանական պատասխանատվության մասին տեսության փիլիսոփայական հիմքերի մշակման համար պարտական ենք շատ հայտնի փիլիսոփաների՝ Պլատոնին, Թ.Մորին, Հ.Հորացիոսին, Թ.Հորսին, Զ.Վիկոյին, Ը.Լ. Մոնտենիոյին, Ժ.Ժ. Ռուստին, Զ.Բեկկարիային, Է.Կանադին, Գ.Վ.Ֆ. Հեգելին, Ի.Բենտամին, Ռ.Ֆ. Հիերինգին, Ֆ.Նիցշեին, Վ.Սոլովյովին, Բ. Բյինին<sup>1</sup>: Պատասխանատվության մասին դրույթներ կան Հայոց Ազգային-եկեղեցական ժողովների որոշումներում, Ալիքար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրերում, Շահամիր և Հակոբ Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ում, իայ իրավական մտքի այլ աղբյուրներում<sup>2</sup>:

Պատասխանատվությունը՝ որպես փիլիսոփայական, սոցիալական, իրավական, քարոյագիտական, հոգեբանական բնդգիրուն հասկացություն, այսօր էլ ուսումնասիրվում է մի շարք գիտությունների կողմից՝ տարբեր տեսանկյուններով: Փիլիսոփայության մեջ առկա են պատասխանատվության երկու հայեցակարգ՝ դասական և ոչ դասական: Շատ դասական հայեցակարգի՝ գործունեության սույնեկտում իրարի հարցները կամ պատասխանատվության մեջ նշում են:

Աստվություն կրող՝ մարդին ազատ է և ինքնուրույն: Անձի ազատությունը և պատասխանատվությունը հանդես են զայխ փոխկապակցված ձևով: Ազատ անձը պետք է ինչ-որ մեկի առջև պատասխան տա՝ Աստծո, դատարանի, դեկանիական իշխանական իշխանության մասին դատությունում ոչ դասական հայեցակարգի համաձայն՝ անձի ազատությունը բացարձակ արժեք չէ, այլ կրում է, իարաբերական բնույթ: Եթե անձը հանդես է զայխ խմբի կազմում, նա չի կարող պատասխանատվություն կրել ընդհանուրի գործողությունների համար: Փիլիսոփա Վ.Կանկեն իր աշխատության մեջ նշում է, որ պատասխանատվության դասական կոնցեպցիան համապատասխանում է ինքնավար սույնեկտի բացարձակ ազատության ընթանակությունը, իսկ պատասխանատվության ոչ դասական կոնցեպցիան զուգահեռություն է ազատ հասարակությանը, որի պահանջները յուրաքանչյուր ոք պետք է հաշվի առնի<sup>3</sup>:

Մարդկային հասարակության պետակիրավական կյանքի զարգացմանը գուգընթաց, իրավաբանական պատասխանատվության մասին տեսության շրջանակում, աստիճանաբար ձևավորվեցին հայացքներ՝ սահմանադրական պատասխանատվության վերաբերյալ: Սահմանադրական պատասխանատվությանը վերաբերող որոշ հարցեր շոշափվել են մինչինափոխական Ռուսաստանում՝ Ա. Ա. Ալեքսեևի, Վ. Մ. Գեսենի, Ս. Ա. Կոտլյարևսկու, Ն. Ի. Լազարևսկու, Մ. Մ. Սպերանսկու և այլ գիտնականների աշխատություններում, որտեղ հիմնականում բննարկվել է կառավարության, նախարարների սահմանադրական պատասխանատվությունը՝ Պետական Դումայի առջև: Սակայն սահմանադրական պատասխանատվության

քյան ինստիտուտը հետագայում չի գարգացել և խորհրդային ժամանակաշրջանում գրեթե մռուցության է մատնվել: Արդյունքում, տասնամյակներ շարունակ գերակայել և այն տեսակետը, որ սահմանադրական իրավունքին բնորոշ չէ, պատասխանատվության ինստիտուտը, սահմանադրական իրավանորմներն ընդհանրապես սանկցիաներ չեն բովանդակում, ուստի անհրաժեշտության դեպքում կյանքի և կոչվում իրավունքի այլ ձյուղերով նախատևած պատասխանատվության միջոցների գործադրմամբ: Եվ միայն XX դարի 70-ական թվականներից սկսած, առանձին պետականագետներ՝ Ս. Ա. Ավազյանը, Ն. Ա. Բորբովան, Յո. Պ. Երեմենկոն, Տ. Գ. Զրածևսկայան, Ֆ. Մ. Ռուդինսկին և այլք, սկսեցին քննարկել ԽՍՀՄ-ում պետական պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակի հիմնահարցերը: Այս հարցում եական փոփոխություններ կատարվեցին հետխորհրդային տարիներին, երբ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի ստեղծումը դարձավ սահմանադրական իրավունքի գիտության ուսումնասիրնան կարեռագույն օրենքական բարեհաջող մեկը:

Սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, իշխանության բաժնաման, «գրպարումների ու հակակշիռների» կառուցակարգի անհրաժեշտ տարր, Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման կարևոր գործոն:

Իրավաբանական բառարանում սահմանադրական պատասխանատվությունը սահմանվում է որպես՝ սոցիալական պատասխանատվության հատուկ տեսակ, որն ունի քաղաքական-իրավական բարդ բնույթ: Սա կիրառվում է, սահմանադրական իրավաբանատման դեպքում և արտահայտվում է, իրավաբանատման սուրյեկտի համար հատուկ բացասական հետևանքներով: Սահմանադրության պատասխանատվության հատուկ տեսակ, որն ունի քաղաքական-իրավական բարդ բնույթ: Սա կիրառվում է, սահմանադրական իրավաբանատման դեպքում և արտահայտվում է, իրավաբանատման սուրյեկտի համար հատուկ բացասական հետևանքներով: Սահմանադրական պատասխանատվության պատասխանատվությունը սահմանվում է, սահմանադրական պատասխանատվության բարձրացումը՝ իրավական պատասխանատվության բարձրացումը՝ իրավական պատասխանատվության կայացման, սահմանադրական ժողովրդավարության և, ընդհանրապես, սահմանադրականության հաստատման անհրաժեշտ նախադրյալ է:

Ասդրական պատասխանատվության ձևեր (սանկցիաներ) են՝ հակասահմանադրական ակտի վերացումը կամ դադարումը, պաշտոնանկությունը (իմպալչմենտի կարգով), լուսորությունների և հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելը, պետական մարմինների, բարձրագույն պաշտոնատար անձանց աշխատանքը պաշտոնապես անրավարար գնահատելը (այդ թվում՝ կառավարության անվատահություն հայտնելով), հաշվեսում մարմնի վաղաժամկետ արձակումը<sup>4</sup>:

Սահմանադրական պատասխանատվությունը կազմում է պետական իշխանության մարմինների սահմանադրաբարավական կարգավիճակի բաղկացուցիչ տարրը: Զբաղեցնելով բարձր պետական պաշտոններ՝ անձինք պետք է ստանձնեն ոչ միայն բարյական, քաղաքական, այլև սահմանադրական պատասխանատվություն: Այդպիսով՝ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը հանդես կգա որպես պաշտոնական դիրքի շարաշահումները և պետականական լիազորությունների վերազանցումները կանխող կարևոր գործոն: Սահմանադրական պատասխանատվությունը պետք է դառնա սահմանադրական կարգի ամրապնդման և սահմանադրական անվտանգության ապահովման իրական երաշխիք: Սահմանադրական կարգը կայում է, և սահմանադրական անվտանգությունն ապահովված է, եթե պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը համապատասխանում է Սահմանադրությանը, որի պահպանն է միտված է ծառայելու սահմանադրական պատասխանատվությունը: Պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության բարձրացումը՝ իրավական պատասխանատվության կայացման, սահմանադրական ժողովրդավարության և, ընդհանրապես, սահմանադրականության հաստատման անհրաժեշտ նախադրյալ է:

Սահմանադրական պատասխանատվության նպատակներն են՝ Սահմանադրության գերակայության և ուղղակի գործողության ապահովումը, մարդու արժանապատվության, իրավունքների ու

ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների պաշտպանությունը, սահմանադրական իրավանորմերի պահանջների կատարումը, սահմանադրական իրավակարգի և օրինականության հաստատումը. Սահմանադրության կարգադրագրերի խախտման դեպքում՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց նկատմամբ հարկադրական միջոցների կիրառումը:

Սահմանադրական պատասխանատվությունն իրականացնում է՝ կարգավորիչ, կանխիչ, դաստիարակիչ, պատժիչ և այլ գործառույթներ: Սահմանադրական պատասխանատվության գործառույթների արդյունավետ իրականացման համար պահանջվում են անհրաժեշտ նորմատիվ իրավական հիմքեր, սահմանադրական-դատավարական ընթացակարգեր, պետական մարմինների գործառնական ու կառուցակարգային ներդաշնակ համակարգի առկայություն և լիանց միջև դինամիկ հավասարակշռության առեղծում՝ «զավուճների և հակակշիռների» մեխանիզմների կիրառմամբ: Հ. Հ. Հակոբյանն այն կարծիքն է, որ հակակշիռների և զավուճների կառուցակարգերը պառլամենտին հնարավորություն են տալիս վերահսկողություն իրականացնել գործադիր իշխանության նկատմամբ, իսկ կառավարությունն էլ իր հերթին սահմանադրական պատասխանատվություն է՝ կրում պառլամենտի առջև<sup>5</sup>:

Սահմանադրական պատասխանատվությունն ունի իր սկզբունքները, որոնք բխում են իրավաբանական պատասխանատվության ընդհանուր սկզբունքներից: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը պետք է համապատասխանի իրավունքի գերակայության, սահմանադրական օրինականության, սոցիալական արդարության, սահմանադրական որոշակիության, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման և այլ սկզբունքներին:

Ի տարբերություն իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների, սահմանադրական պատասխանատվությունը բնորոշվում է հատուկ իրավական կարգավիճակով ունեցող սուբյեկտությունունում:

Աներով: Սահմանադրական պատասխանատվություն կարող են կրել միայն այն սուբյեկտները, ովքեր օժտված են դեմքատունակությամբ, այսինքն՝ իրենց հակադրավական արարքների համար իրավաբանական (այդ թվում՝ սահմանադրական) պատասխանատվություն կրելու ունակությամբ: Սահմանադրական դեմքատունակությամբ օժտված են անհատական և կողեկանիվ սուբյեկտները: Սահմանադրական պատասխանատվության են ենթարկվում պետության բարձրագույն պաշտոնատար անձինք՝ երկրի նախագահը, խորհրդարանի պատգամավորները, կառավարությունը՝ իրենց ընդունած որոշումների, կատարած գործողությունների համար, որոնք ոչ համարժեք են արտացոլում հասարակական կամ պետական կյանքի այս կամ այն ոլորտի իրավական կարգավորման պահանջները. Խախտում են սահմանադրական իրավանորմերը, դուրս են վարքագծի սահմանադրափրավական մոդելի շրջանակից և այլն: Սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի ճանաշումը՝ որպես սահմանադրական իրավականախտման սուբյեկտ, համապատասխանորեն փոխում է նրա իրավական կարգավիճակը՝ վերածելով սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի: Նա կրում է, անձնական, գույքային, բարոյական գրկանքներ, իրավական բնույթի սահմանափակումներ:

Սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակներից Լականորեն տարբերվում է իր բովանդակությամբ: Սահմանադրական պատասխանատվությունը նեզատիվ կամ ուսուրութեակտիվ առումով պատասխանատվություն է հանրային իշխանության ոչ պատշաճ իրականացման, սահմանադրական իրավանորմերի խախտման համար: Միաժամանակ, սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտները պովիտիվ սահմանադրական պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունների կատարման համար, ինչը կարեղ է սահմանադրական իրավակարգի և օրինականության ապահովման համար: Նեզատիվ սահմանադրական պատասխանատվության հիմքը սահմանադրական իրավախախ-

տումն է, իսկ պոզիտիվ սահմանադրական պատասխանատվոքունը կապված է, սահմանադրական իրավանորմերում պարտականությունների ամրագրման և սուրյեկտի կողմից իր սահմանադրական պարտականությունների կամավոր կատարման հետ։ Սահմանադրական պատասխանատվորթյան նեզատիվ և պոզիտիվ ասպեկտները կարելի են համարել սահմանադրական պատասխանատվորթյան իրականացման հարկադիր ու կամավոր ձևեր։ Սահմանադրական պատասխանատվորթյան իրացման կամավոր ձևը (կամ պոզիտիվ ասպեկտը) սահմանադրական իրավանորմերի պահանջների կատարումն է, դրանց պահպանումը, որը դրսուրվում է սահմանադրական իրավահարաբերությունների սուրյեկտների իրավաշափ վարժագծում, իսկ հարկադիր պատասխանատվորթյան կիրառման հիմքը սահմանադրական իրավախախտումն է։

Սահմանադրական պատասխանատվորթյունը սերտորեն կապված է սահմանադրական վերահրակողության ինստիտուտի հետ։ Սահմանադրական վերահսկողության իրականացման արդյունքում կարող են կիրառվել սահմանադրական պատասխանատվորթյան միջոցներ։ Հայաստանի Հանրապետությունում դատական սահմանադրական վերահսկողության մարմինը սահմանադրական դատարանն է, որը կարևոր դեր է կատարում սահմանադրահարավական սանկցիաների կիրառման մեջանիզմում։

Ի տարրելություն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, մի շարք երկրների իիմնական օրենքներում սահմանադրական պատասխանատվորթյան ինստիտուտը ուղղակիրեն ամրագրված է։ Այսպիս, Ավարիայի Հանրապետության դաշնային սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածը սահմանում է, «Սահմանադրությամբ նախատեսված պատասխանատվորթյուն դաշնության և նրա միավորների պաշտոնատար անձանց համար՝ իրավախախտումների կատարման դեպքում»<sup>6</sup>։

Որոշ հեղինակներ սահմանադրական պատասխանատվորթնը բնորոշում են որպես սահմանադրական իրավունքում հարկադրանքի տեսակ։

Վ. Ի. Չերվոնյուկը գտնում է, որ սահմանադրական պատասխանատվորթյունն իրենից ներկայացնում է, անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջանում են լիազոր պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքական գործունեության մյուս սուրյեկտների կողմից սահմանադրահարավական պամանջներից շեղվելու դեպքում։ Ըստ նրա՝ սահմանադրական պատասխանատվորթյունը կարող է առաջանալ սխալ քաղաքական կորսի, անարդյունավետ պետական գործունեության հետևանքով<sup>7</sup>։

Կարծում ենք, որ սահմանադրական պատասխանատվորթյունն ավելի լայն հասկացություն է, քան սույկ «անբարենպաստ հետևանքները»։ Այս հետևանքներն առաջանում են հենց սահմանադրական պատասխանատվորթյան ինստիտուտի գործադրման արդյունքում, քայլ իրենցով շնչ սպառում սահմանադրական պատասխանատվորթյան ողջ բռվանդակությունը։ Բացի այդ, որպես սահմանադրական իրավանորմերի պահանջներից շեղվող սուրյեկտներ մատնանշվում են նաև քաղաքական գործունեության սուրյեկտները։

Վ. Ի. Չերվոնյուկի սահմանումից մի շարք հարցեր են ծագում. նախ, պարզ չէ, թե քաղաքական գործունեության որ սուրյեկտների մասին է խոսը, կամ ո՞վ և ինչպես ո՞վ որոշում սխալ քաղաքական կորսի, պետական գործունեության ոչ արդյունավետ լինելը և այլն։ Նշված հանգամանքները կարող են քաղաքական պատասխանատվորթյան հիմք ծառայել։

Գրականության մեջ կա տևակետ, համաձայն որի, իրավաբանական (այդ թվում՝ սահմանադրական) պատասխանատվորթյունն իր Լուրյամբ իրավահարաբերություն է, պետության՝ ի դեմք նրա լիազոր մարմինների և իրավակայտի միջև։ Ինչ խոսք, իրավահարաբերությունների և իրավաբանական պատասխանատվորթյան միջև առկա է օրգանական կապը։ Իրավաբանական պատասխանատվորթյունը գոյություն ունի և անմիջականորեն կիրառվում է իրավահարաբերություններում, այսինքն՝ իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններում։

Ըստ Լ. Վ. Գոլովկինի, առավել ճիշտ կլինի «իրավաբանական պատասխանատվորյունն անվանել «իրավաբանական պատասխանատվորյան հարաբերություն» և միայն որպես հարաբերություն դիտարկել այդ բարդ հասարակական երևոյթը»<sup>8</sup>: Համակարծիք ենք Լ. Վ. Գոլովկինի հետ, քանի որ իրավաբանական պատասխանատվորյունը չլի կարող իրականացվել այլ կերպ, քան իրավական հարաբերությունների տեսքով, սակայն, կարծում ենք, առավել ճիշտ կլինի խոսել ոչ թե «իրավաբանական պատասխանատվորյան հարաբերության», այլ «իրավաբանական պատասխանատվորյան կիրառման հետ կապված իրավահարաբերությունների» մասին:

Իրավահարաբերությունների և պատասխանատվորյան կապն ընդգծված է նաև Ե. Վ. Չերնիխի աշխատությունում՝ որպես իրավահարաբերություններում իրավաբանական պատասխանատվորյան իրացման փաստ: Նա միանշանակ պընդում է, որ իրավահարաբերություններից դուրս պատասխանատվորյունը չունի դրսերման իրական ձևեր և գտնում է, որ իրավաբանական պատասխանատվորյան կապն իրավահարաբերությունների հետ առկա է ոչ միայն պահպանիչ, այլև ընդհանուր կարգավորիչ՝ իրավահարաբերություններում<sup>9</sup>: Գտնում ենք, որ իրավահարաբերությունները կազմում են սահմանադրական պատասխանատվորյան իրացման համար խիստ անհրաժեշտ «կենսական միջավայրը»: Պատասխանատվորյան կիրառման հետ կապված իրավահարաբերությունները իրավախախտի (կամ իրավախախտման մեջ մեղադրվող անձի) և պետական մարմինների (օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավախախտումից տուժած անձի) միջև իրավական կապերն են՝ շարժմնաբացի մեջ: Այդ հարաբերությունների շրջանակում լուծվող կիմնական խնդիրներն են՝ իրավախախտման առկայության կամ բացակայության, սամկցիա կիրառելու անհրաժեշտության և կոմերեալ սամկցիայի որոշման, իրավախախտման մեջ մեղադրի իրավասահմանափակումների (կամ պատասխանատվորյունից ու պատժից ազատման), այդ պարտականություննե-

րի և իրավասահմանափակումների իրացման հարցերը: Պատասխանատվորյունն այստեղ դիտարկվում է որպես բաղաքացու կամ կազմակերպության պատասխանատվորյուն՝ որոշակի իրավախախտման համար:

Իրավաբանական պատասխանատվորյան մյուս տեսակների նման, սահմանադրական պատասխանատվորյունն իր նեգատիվ ասպեկտով ևս պետական հարկադրանքի միջոց է՝ հիմնված իրավախախտման իրավաբանական և հասարակական դատապարտման վրա, որն արտահայտվում է իրավախախտի համար որոշակի բացասական հետևանքների առաջացմամբ: Սակայն սահմանադրական պատասխանատվորյանը բնորոշ հարկադրանքն ունի իր առանձնահատկությունները: Օրինակ, եթե քրեական պատասխանատվորյանն ու պատժին բնորոշ են ազատությունից զըրկումը կամ ազատության սահմանափակումը, ապա սահմանադրական պատասխանատվորյան իրացման հետևանքներն այլ բնույթ ունեն: Սահմանադրական պատասխանատվորյանը բնորոշ չեն հարկադրանքի այնպիսի միջոցները, ինչպիսին են ազատազրկումը, կալանքը և այլն: Միաժամանակ, սահմանադրական պատասխանատվորյունը ոչ միայն սահմանադրական իրավանորմերի խախտման համար պատիժ է ներառում, այլև կատարում է իրավավերականգնողական գործառույթ: Բայց եթե բաղաքացիական իրավունքում վերականգնումը արտահայտվում է վնասի փոխհատուցմամբ, նախնական վիճակի վերականգնմամբ, ապա սահմանադրական իրավունքում՝ այն կապված է օրենքի խախտումները վերացնելու և պետական ազարտի, պատգամավորների, պաշտոնատար անձանց արդյունավետ գործունեության, բաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների իրականացման, պարտականությունների կատարման ապահովման, անհատական ու հասարակական շահերի գուգակցման հետ:

Սահմանադրական պատասխանատվորյունն ունի միայն իրեն հատուկ առանձնահատկություններ՝ պայմանավորված սահմանադրական իրավունքի կարգավորման առարկայի առանձնահատ-

կորյուններով: Նեզատիվ սահմանադրական պատասխանատվությունը կիրառվում է սահմանադրական իրավունքի նորմերի խախտման դեպքում: Սակայն նշված նորմերի խախտման համար կարող է կիրառվել նաև պատասխանատվության այլ տեսակ: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճնշացվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Եվ եթե սահմանադրական այս սկզբունքը խախտվի, ապա իրավախախտ սուբյեկտը կենքարկվի ոչ թե սահմանադրական, այլ վարչական, քաղաքացիական, քրեական պատասխանատվության ու պատմի:

**Մ. Ի. Հովսեփյանը նշում 1. սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանականի տևակիրքից սահմանագործող հետևյալ հատկանիշները.**

1. Սահմանադրական պատասխանատվության ճյուղային համարժեքությունը (սահմանելությունը սահմանադրական իրավունքին),

2. սահմանադրական պատասխանատվության առանձնահատուկ իմքերը,

3. սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման մեխանիզմների (դատական և արտադատական) առանձնահատկությունները,

4. պատասխանատվության միջոցների յուրահատուկ համակարգը<sup>10</sup>:

Կարծում ենք, որ նշված հատկանիշներին կարելի է ավելացնել սահմանադրական պատասխանատվության սուբյեկտների առանձնահատուկ շրջանակը, սահմանադրական պատասխանատվության իրապարակային բնույթը, հանրային մեծ արձագանք առաջացնելու հատկությունը, քաղաքական հետևանքներ ունենալը, հատուկ նպատակներն ու խնդիրները:

**Ն. Մ. Կորոստվան սահմանադրական պատասխանատվության առանձնահատուկ հատկանիշ է համարում.**

1) սահմանադրական պատասխանատվության համալիր բնույթը, նրա բարդ կազմը,

2) սահմանադրական պատասխանատվության համալիր բնույթը, նրա բարդ կազմը,

բյան լատենտային կամ անորոշ բնույթը,

3) սահմանադրական սանկցիաների առանձնահատկությունները<sup>11</sup>:

Գտնում ենք, որ լատենտային կամ անորոշ բնույթը պետք է վերագրել ոչ թե սահմանադրական պատասխանատվությանը, այլ սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքին՝ սահմանադրական իրավախախտմանը, քանի որ նման իրավախախտումները հաճախ չեն գրանցվում կամ ել հատուկ արձանագրվում՝ մնալով չբացահայտված, բողարկված վիճակում:

Մեր կարծիքով, սահմանադրական պատասխանատվությունը, ի տարբերություն իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների, ունի խիստ արտահայտված քաղաքական բնույթ:

Սահմանադրական պատասխանատվությանը (ավելի ստույգ՝ սահմանադրական պատասխանատվության շարժներացին և սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառմանը) բնորոշ ներ օրենադրությամբ սահմանված որոշակի դատավարական ձևեր: Պատասխանատվության միջոցների կիրառումը իրավախախտի նկատմամբ իրականացվում է սահմանադրական-դատավարական նորմերին համապատասխան: Անհրաժեշտ ենք համարում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ Հանրապետության Նախագահին պաշտոնանկության ձևով սահմանադրական պատասխանատվության ենթակելու, ՀՀ կառավարությանն անվտահություն հայտնելու, Հանրապետության Նախագահի կողմից օրենսդիր մարմինն արձակելու և սահմանադրական պատասխանատվության սանկցիաների կիրառման կառուցակարգերի հստակեցում:

Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի գորգացման համար անհրաժեշտ է ունենալ իրավական մշակույթի և, հատկապես, սահմանադրական մշակույթի բավարար մակարդակ, հասարակության իրավագիտակցության և, առաջին հերթին, պաշտոնատար անձանց իրավակրթության աստիճանի բարձրացում:

Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի գործունեությունը կարևորվում է Հա-

յաստանի Հանրապետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման, ելքոպական պետորյունների ընտանիքին ինտեգրման, հուսալի և պատասխանատու գործընկերոց համբավի, միջազգային վարկի ու ինդինակորյան ամրապնդման, արյունավետ և նպաստավոր արտարին քաղաքանորյան իրականացման առումներով:

Ընդհանուրացներով վերը շարադրվածը՝ կարող նմք փաստել, որ սահմանադրական պատասխանատվորյունը սահմանադրավակական բարդ ինտախտութ 1., իրավաբանական պատասխանատվորյան ինքնուրույն տևակ, որը կոչված 1. ծա-

ռայելու Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովմանը, հասարակության մեջ այնպիսի կարգի հաստատմանը, որի պայմաններում մարդը, նրա արժանապատվորյունը, իրավունքներն ու ազատությունները ճանաչվեն և պաշտպանվեն որպես բարձրագույն արժեքներ, պետականական լիազորություններով օժտված մարմիններն ու պաշտոնատար անձինք պատասխանատվորյուն կրեն իշխանության աղբյուրի՝ ժողովրդի առջև իրենց սահմանադրական պարտականությունների պաշշաճ կատարման համար:

<sup>1</sup>Տես Կոփуний. Я верю в древность, Сост., пер. и comment. И. И. Семененко, М., 1995, с. 55-164.

<sup>2</sup>Տես Шан Ян. Книга правителя области Шан, Пер., comment. Л. С. Переломова, М., 1993, с. 156-216.

<sup>3</sup>Տես Платон. Законы Собр. Соч., В 4 т., Пер. с древнегреч., Общ. ред. А. Ф. Лосева, В. Ф. Асмуса, А. А. Тахо-Годи, М., 1994, Т. 4, с. 71-437.

<sup>4</sup>Տես Мор Т. Утопия, Пер. с лат., Ю. М. Каган, М., 1978.

<sup>5</sup>Տես Гроций Г. О праве войны и мира, Пер. с лат. А. Л. Сакетти, М., 1994.

<sup>6</sup>Տես Гоббес Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского, Пер. с лат. и англ., Соч в 2 т., Сост. В. В. Соколов, М., 1991, Т. 2, с. 3-545. Основы философии, Ч. 3. О гражданине, Пер. с лат. и англ., Соч в 2 т., Сост. В. В. Соколов, М., 1989, Т. 1, с. 270-506.

<sup>7</sup>Տես Вико Дж. Основания новой науки об общей природе наций, Пер. с итал., М.-К., 1994.

<sup>8</sup>Տես Монтескье Ш. Л. О духе законов, Избр. произв., М., 1955, с. 159-730.

<sup>9</sup>Տես Руссо Ж. Ж. Об общественном договоре, или принципы политического права. Трактаты, М., 1969, с. 151-256.

<sup>10</sup>Տես Беккария Ч. О преступлениях и наказаниях, М., 1995.

<sup>11</sup>Տես Кант И. Метафизика нравов Соч. в 8 т., М., 1994, Т. 6, с. 224-543.

<sup>12</sup>Տես Гегель Г. В. Философия права, Пер. с нем., Ред. и сост. Д. А. Керимов, В. С. Нерсисянц, М., 1990.

<sup>13</sup>Տես Բентам И. Введение в основания нравственности и законодательства, Пер. А. Н. Пыпина, А. Н. Неведомского. СПб., 1867. Теория государства и права: Хрестоматия, В 2 т., Авт. - сост. В. В. Лазарев, С. В. Липчен, М., 2001, Т. 2, с. 460-466.

<sup>14</sup>Տես Иеринг Р. Ф. Борьба за право, М., 1991.

<sup>15</sup>Տես Ницше Ф. Генеалогии морали. Полемическое сопишение в 2 т., Пер. с нем., Сост. А. Свасян, М., 1990, с. 407-524.

<sup>16</sup>Տես Соловьев В. С. Оправдание добра. Нравственная философия, Соч. в 2 т., Сост. А. Ф. Лосева, А. В. Гутыги, М., 1990, Т. 1, с. 47-548.

<sup>17</sup>Տես Ильин И. А. О сущности правосознания, М., 1993

<sup>18</sup>Տես Սամուելյան Խ. Սլիփրար Գոյջի Պատասխանագիրը ու իին հայոց քաղաքացիական իրավունքը. Վիեննա, 1911, Խ. Սամուելյան Հայ իին իրավունքի պատմությունը. Հ. 1, Երևան: ԱՐՄՖԱԾԵ, 1939, Սլիփրայան Ա. Գ. «Սլիփրար Գոյջի և Հայոց Պատասխանագիրը», Երևան, 1965: Եղազար Ս. Исследования по истории армянского права: публичного и частного, Киев, 1924: Սաֆարյան Գ. Հ., Խաչատրյան Հ. Մ. Հայ իրավունքի հուշարձաններ (5-18-րդ դր.), Երևան: Արեգ, 1994: Սաֆարյան Գ. Հ. Հայաստանի միջնադարյան իրավունքը (Ժ-ԺԳ դդ.), Երևան: Սլիփրար Գոյջ, 1996: Գրիգորյան Գ. Ա. Ազգային Սահմանադրության Հայոց, Երևան, 2004: Ավակյան Ռ. Օ., Ավակյան Ռ. Ռ. Իстоки армянской правовой мысли, Ереван, 2008 և այլն:

<sup>19</sup>Տես Կամիկ Վ. Ա. Փիլիփիանություն: Պատմական և միասնամատիկ դասընթաց, լրասագիր բանելի համար, Երևան, 2001, էջ 198:

<sup>20</sup>Տես Большой юридический словарь. Под ред. А. Я. Сухарева, В. Е. Крутских, М., 2002, с. 272.

<sup>21</sup>Տես Հակոբյան Հ. Հ. Պալղամենուր և պատմամենտարիալը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 242-243:

<sup>22</sup>Տես Конституции стран Европы, М., 2001.

<sup>23</sup>Տես Червонюк В. И. Конституционное право, М., 2003, с. 37-38.

<sup>24</sup>Տես Головкин Л. В. Вопросы теории юридической ответственности. Проблемы правоотношений, правопорядка, их структура и взаимодействие, М., 1975, с. 236.

<sup>25</sup>Տես Черных Н. В. Юридическая ответственность и правоотношение. Вопросы государства и права: Межвузовский сборник статей. Саратов, 1986, с. 138.

<sup>26</sup>Տես Овсепян Ж. И. Критерии конституционной ответственности в РФ, с. 6.

<sup>27</sup>Տես Колесова Н. М. Особенности конституционной ответственности в России. Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, М., 2001, с. 89.

## ՇՈՒԾԱՆ ԴՈՅՉՈՅՑԱՆ

Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու



# ՄԱՐԴՈՒ ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**ՀՀ**-ում մարդու արժանապատվությունը հոչակվում է որպես բարձրագույն արժեք և մարդու իրավունքների հիմք, որի երաշխավորը պետությունն է: Պատահական չէ, որ մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանող 2-րդ զլոյալ սկսվում են հենց մարդու արժանապատվությունն ամրագրող 14-րդ հոդվածով. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

Երաշխավորելով խոսրի ազատությունը՝ մարդու իրավունքները պաշտպանող միջազգային իրավունքի նորմերը միաժամանակ նշում են, որ այս ազատությունը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել մարդու պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում են, որ խոսրի ազատությունը ենթակա է սահմանափակման՝ այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով:

Հայաստանում գործում է պատվի և արժանապատվության քաղաքացիական և քրեական կարգ: Սույն հոդվածի շրջանակներում անդրադառնալով հարցի քաղաքացիական կարգավորման առանձնահատկություններին՝ կներկայացնենք նաև օրենսդրական այն քերությունները, որոնք բացասարար են անդրադառնում Հայաստանում՝ արտա-

հայտվելու և մամուլի ազատության վրա:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ-ում մամուլի դեմ ներկայացված դատական գործերի ճնշող մեծամասնությունը վերաբերում է պատվի, արժանապատվության և զործարար համրավի արատավորման գործերին: 2004-2007թթ. ընթացքում գրանցված 16 դատական գործերից 13-ի դեպքում հայցվոր կողմը մամուլի ներկայացուցիչներից պահանջել է հերթել պատիվն ու արժանապատվությունը արատավորող տարածված տեղեկությունները: Ուստի, հատկապես կարևոր է այս ոլորտը կարգավորող հարցերին անդրադառնալը՝ առկա բացրողությունները բացահայտելու և դրանք շտկելու առաջարկներ անելու նպատակով:

Որպես անձի պատվի և արժանապատվության պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերթել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համրավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը շապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը»: «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրավանացնողից պահանջել հերթելու իր իրավունքները խախտող փաստացի անձատությունները, որոնք տեղ են գտնել լրատվական գործունեություն իրականացնողի

տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը»:

Այս հոդվածներից բխում է, որ Հայաստանում՝ մարդու պատվի, արժանապատվության ու գործարար համբավի քաղաքացիական պաշտպանության առաջին և հիմնական ձևն է հերթումը:

Հոդվածներից եզրակացնում ենք նաև, որ անձը կարող է, պահանջել տարածված տեղեկատվության հերթում, իսկ նրա պահանջը կարող է բավարարվել, եթե առկա են հետևյալ հանգամանքները.

Մեղեկություններն արատավորել են անձի պատվն ու արժանապատվությունը կամ խալսուկ և նրա իրավունքները,

Մեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը (փաստացի անշտություններ),

այդ մեղեկությունները տարածվել են մասնագրապես լրատվական գործունեություն իրականացնողի կողմից:

Այսպիսով, առաջին կարևոր պայմանն այն է, որ տարածված տեղեկատվությունը արատավորի մարդու պատիվն ու արժանապատվությունը, խախտի նրա իրավունքները: Տեղեկություններն արատավորող ճանաչելու շափամիջները, սակայն, բացակայում են օրենսդրության մեջ: Այդ դեպքում ի՞նչը պետք է հիմք ընդունի դատարանը՝ դրանք արատավորող ճանաչելու համար: Ցուրաբանչյուր դեպքում դատարանը հիմք է ընդունում այն, թե արդյոք տարածված տեղեկությունները հասարակության մեջ ընկալվում են որպես արատավորող, դատապարտելի, ինչպես, օրինակ՝ գող, ապուշ և այլ արտահայտությունները:

Մյուս կողմից, սակայն, խոսքի և արտահայտվելու ազատության իրավունքը պարտադրում է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս. Եթե իրապարակվածը պարզապես լրագրողի կարծիքն է և կոնկրետ մեղադրանք չի պարունակում, ինչպես, օրինակ՝ փատ դատավոր, թույլ դասախոս բառակապակցությունները, դատարանը չպետք է դրանք

արատավորող ճանաչի: Տարածված տեղեկություններն անպայման պետք է վերաբերեն փաստերին և ոչ թե լինեն դատողություններ, կարծիք: Լինելով Եվրախորհրդի անդամ պետություն՝ Հայաստանը չի կարող հաշվի չնստել Եվրոպական դատարանի կայացրած մի շարք որոշումների հետ, որոնք պաշտպանության տակ են առնում կարծիք արտահայտելու ազատությունը: 1999թ. «Կալբանի գործով Եվրոպական դատարանը որոշել է, որ ճամուղը պարտավոր է տեղեկություններ և գաղափարներ հաղորդել հասարակական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ և մերժել է այն տեսակետը, թե մամուլը չպետք է կարծիքներ իրապարակի, քանի դեռ չի կարող ապացուցել դրանց ծշմարտացիությունը: Պատվի, արժանապատվության գործեր քննելիս՝ դատարանը պետք է փաստերը տարբերակի գնահատական-դատողություններից, վերջիններս ևնբակա չեն ապացուցման: 2001 թվականի փետրվարի 27-ին՝ «Երուաղեմն ընդդեմ Ավստրիայի» գործով դատարանը որոշեց, որ գնահատող դատողությունների հավաստիությունն ապացուցելու պահանջն անհնարի կատարել, և որ այն ունահարում է կարծիք արտահայտելու ազատությունը՝ Եվրոպական կոմիսարիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը: Սակայն մյուս կողմից՝ գնահատող դատողությունը պետք է համոզիչ և փաստացի հիմքեր ունենալ:

Այսպիսով, պատվի և արժանապատվության հայցը կարող է բավարարվել, եթե տեղեկությունները լինեն և արատավորող, և ոչ հավաստի: Տեղեկությունները համարվում են ոչ հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Համաձայն ՀՀ Քաղ. օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապացուցման պարտականությունը դրված է պատասխանող կողմի, այսինքն՝ լրատվամիջոցի վրա: Սա, մեր կարծիքով, ՀՀ օրենսդրության լուրջ թերություններից է: Միջազգային շափամիջները սահմա-

նում են, որ ապացուցման բեռք պետք է դրվի ոչ թե լրատվամիջոցի, այլ հայցվոր կողմի վրա: Արտիկլ 19 կազմակերպության «Սահմանել գրաբարտությունը» հրապարակման 7-րդ սկզբունքում նշվում է, որ հանրային նշանակություն ներկայացնող խնդիրների դեպքում հայցվորը պետք է կրի տեղեկությունների կեղծ լինելը ապացուցելու քեզը: Հայնորեն բնդունքած է, որ որոշակի հանգամանքներում նույնիսկ կեղծ, արատավորող տևելեկությունները պետք է պաշտպանված լինեն հատկապես մասուլի դեպքում, որի պարտքն է ծառայել հասարակական նշանակության խնդիրներին հասարակության տեղյակ լինելու իրավունքին: Եվրոպական դատարանը 1999 թվականի մայիսին «Բլադեր Տրոմզո և Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի» գործով կայացրած որոշման համաձայն՝ լրագրողի առաջ դնում է ոչ թե տարածած տեղեկատվության հավաստիությունն ապացուցելու պարտականություն, այլ միայն նշում է, որ լրագրողական նյութը պետք է «հիմնականում հավասարակշռված լինեն»:

Պատվի, արժանապատվության պաշտպանության բաղարացիական գործերում դիտավորությունն անհրաժեշտ հանգամանք չի համարվում: Հնարափր 1, լրագրողը տարածել է արատավորող տեղեկությունները ոչ թե դիտավորությամբ, այլ անփութությամբ: Սա նրան պատասխանատվությունից չի ազատում:

Մարդու պատվի և արժանապատվության ուժանահարման դեպքում, օրենքը սահմանում է պատասխանատվության հետևյալ ձևերը՝ հերքում, պատասխան և նյութական վճարի փոխհատուցում:

**Հերքում:** ՀՀ Քաղացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը նշում է, որ եթե բաղարացու պատիվը, արժանապատվությունն ու գործարար համրավն արատավորող տևելեկությունները տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա դրամք պետք է, իերքվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով: Ի տարբերություն նախկինում գործող «ԶԼՄ» մասին օրենքի, որտեղ

չեր սահմանափակվում լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու ժամկետը՝ գործող Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հերքման պահանջը կարող է ներկայացվել տվյալ տեղեկատվության տարածման օրվանից հետո մեկանույթ ժամկետում: Լրատվամիջոցը հերքման պահանջն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնելու ժամկետում՝ հերքում տարածելու ժամանակի մասին, կամ, գրավոր հայտնել՝ հերքման տարածումը մերժելու մասին:

Հերքումը հրապարակվում է անվճար՝ դրա պահանջն ստանալու օրվանից հետո մեկշաբաթյա ժամկետում, լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար՝ բնդունելի այլ եղանակով: Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Եթե նախկին օրենքը բոլյալտրում էր, որ հերքման ժավալը կարող էր նույնիսկ հերքվող լրատվության ծավալի կրկնակի չափով լինել, ապա նոր Օրենքը պարզապես նշում է, որ հերքումը չպետք է զիջի հերքվող տևելեկատվությանը՝ տեղի, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով:

Օրենքը հերքման առանձնահատուկ կարգ է նախատեսում ընտրությունների ժամանակ: Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, թեկնածուի մասին տարածված տեղեկատվության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչև քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է անհապաղ՝ հերքման պահանջն ստանալուն պես: Օրենքը նաև նշում է, որ նշում ժամկետում հերքման տարածումը հնարավոր չլինելու դեպքում, լրատվամիջոցը, այն կարող է հրապարակել օրենքով սահմանված՝ 1-շաբաթյա ժամկետում:

**Պատասխանի իրավունք:** Ի տարբերություն նախկինում գործող օրենսդրության, որը պատասխան հրապարակելը քողնում էր լրատվամիջոցի

հայեցողությանը և շլր կարգավորում, նոր Օրենքը սահմանում է պատասխանի իրավունքը և դրա իրացման կարգը:

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հերքման հետ միասին, անձն իրավունք ունի պահանջել իրապարակել իր պատասխանը: Ընդ որում, լրատվամիջոցին հնարավորություն և, արվում ընտրելու՝ իրապարակել հերքու՞նը, պատասխա՞նը, թե՞ երկուսը միասին: Ի դեպ, պատասխանի իրապարակումով բավարարված է համարվում հերքման պահանջը: Պատասխանը իրապարակվում է, հերքման համար նախատեսված կարգով և ժամկետությունում: Օրենքը որոշակիորեն սահմանափակում է մտցնում պատասխանի բովանդակության մասին, նշելով, որ այն պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անձշտություններին: Այն նաև չպետք է ներառի տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի կամ այլ անձանց, նրանց գործունեության հասցեին քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ (հոդված 8, կամ 6-րդ):

Հերքման նման, պատասխանը ևս պետք է իրապարակվի անվճար և չգերազանցի պատասխանի առարկա տեղեկատվության ծավալը:

Այսպիսով, և հերքումը, և պատասխանը պետք է առնչվեն միայն իրապարակված փաստացի անձշտություններին, և ոչ երբեք կարծիքին, ինչպես նաև իրապարակված տեղեկատվությանը չառնչվող որևէ այլ խնդրի:

Հերքման և պատասխանի կարգավորման մասին Օրենքում առկա են որոշ բացընդուներ: Օրենքում չի նշվում, թե արդյոք քաղաքացու փոխարևու հերքման և պատասխանի պահանջ կարո՞ղ են ներկայացնել այլ անձինք, ասենք՝ հարազատները, բնկերները և այլոր. սրանից կարելի է ենթադրել, որ վերջիններս կարող են հայց ներկայացնել միայն համապատասխան լիազորագրի հիման վրա: Եթե իրապարակված տեղեկություններն

արատավորում են անշափահասի կամ անգործունակի պատիվը, ապա նրանց իրավունքների պաշտպանությունը կարող են իրականացնել իրենց ծնողները, կամ՝ օրինական այլ ներկայացուցիչներ: Օրենքում բաց է մնում նաև այն հարցը, արդյոք հնարավո՞ր է մարդու պատվի, արժանապատվության պաշտպանության հայց ներկայացնել անձի մահից հետո: Ենթադրվում է, որ հայց կարող են ներկայացնել նրա իրավահաջորդները:

Վիճարկման ենթակա է նաև հետեւյալ հարցը, եթե անձը բաց է քողել հերքում պահանջելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, նա կարո՞ղ է դիմել դատարան՝ հերքում պահանջելու հայցով, չե՞ որ լրատվամիջոցը կարող է իրավացիորեն առարկել և չտպագրել հերքումը: Սակայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին կետը նշում է, որ անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության ուղղված պահանջների վրա հայցային վաղեմություն չի տարածվում: Ուստի, անձի պատվի և արժանապատվության պաշտպանության դեպքերում, վերջինս կարող է ցանկացած ժամանակ դիմել դատարան՝ իր խախտված իրավունքները վերականգնելու պահանջով:

Եթե տևողեկատվությունները իրապարակվել են անանուն կամ կեղծ անվանք, և լրատվամիջոցը կամ լրագրողը չի ցանկանում բացահայտել իր լրատվության աղբյուրը, ապա տվյալ դեպքում գործով պատասխանող է ճանաշփում լրատվամիջոցը: Ի դեպ, Օրենքով սահմանված կարգի համաձայն՝ լրագրողը լիովին իրավունք ունի շրացահայտել իր լրատվության աղբյուրը, բացառությամբ այն դեպքերի, եթե դա պարտադիրվում է դատարանի որոշմանք՝ միայն քենական գործի առիրով՝ ժանր կամ առանձնապես ժանր հանցագործության բացահայտման նպատակով (Օրենքի 5-րդ հոդված):

**Մերժման հիմքերը:** «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը տալիս են հերքման և պատասխանի իրապարակման պահանջը մերժելու հիմքերը: Պահանջը

բոլոր դեպքերում պետք է, մերմվի, եթե՝

տվյալ պահանջն անանուն է,

այն հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտին:

**Հերքման կամ պատասխանի պահանջը կարող է, մերմվել, եթե՝**

չի պահպանվել պահանջը ներկայացնելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը,

պահանջը վերաբերում է այնպիսի տեղեկատվությամբ, որը տարածվել է, իրապարակային ելույթին, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերին, լրատվության այլ միջոցին կամ հեղինակային որևէ ստեղծագործությանը կատարված հղումով, և սկզբնաղբյուրը հերքում չի տարածել:

**Հերքման կամ պատասխանի հրապարակումը ներթելու դեպքում, անձը իրավունք ունի դատարանի միջոցով պահանջել դրանց հրապարակումը:**

Ինչպես արդեն նշվեց, դիտավորությունը անհրաժեշտ է անզամանք չի համարվում պատվի, արժանապատվության պաշտպանության քաղաքացիական գործերում:

Կարևոր երաշխիք է, որ լրատվամիջոցն ազատվում է տվյալ տեղեկատվությունը տարածելու համար պատասխանատվությունից, եթե այդ տեղեկությունները նա ստացել է լրատվական գործակալությունից, դրանք բխում են վիճարկող կողմի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից, ինչպես նաև, եթե այդ տեղեկությունները հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերաբարդությունն են, և դրանք տարածելիս լրատվամիջոցը հղում է կատարել այդ աղբյուրին: Հղումը սկզբնաղբյուրին՝ բոլոր դեպքերում պարագաների է, հակառակ դեպքում լրատվամիջոցը չի կարող ազատվել հերքում կամ պատասխան տպագրելու պարտականությունից:

**Վնասի փոխհատուցում:** Հայաստանում՝ մար-

դու պատվի, արժանապատվության ու գործարար համբավի քաղաքացիական պաշտպանության մյուս ձեր՝ նյութական վնասի փոխհատուցումն է: ՀՀ Քաղ. օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի տեղեկությունները հերքելու հևտ միասին՝ պահանջել դրանց տարածմամբ պատճառված վնասների հատուցում: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի:

1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատևած չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված նկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

3. Եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց բողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով:

Կարևոր է, որ վնասի փոխհատուցման չափը չպետք է այնքան բարձր լինի, որ սպառնա լրատվամիջոցի գոյուրյանը:

Պատվի, արժանապատվության ուսնահարումը մարդուն կարող է պատճառել ինչպես նյութական, այնպես էլ բարոյական վնաս: Արատավորող տեղեկությունները մարդուն կարող են պատճառել հոգեկան տառապանքներ: Սակայն, ի տարրեկություն ՀՀ նախկին Քաղ. օրենսգրքի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության համանուն օրենսգրքի (Վերջինս, հիմք 1, ծառայել ՀՀ Քաղ. օրենսգրքի համար), ՀՀ Քաղ. օրենսգրքը բարոյական վնասի

փոխհատուցում չի նախատեսում: Սինջեռ՝ մարդու կրած հոգեկան տառապանքները երբեմն ավելի ծանր կարող են լինել, քան պատճառված նյութական վճար: Քաղաքացիական օրենսգրքի հեղինակները բարոյական վճարի կարգավորման բացակայությունը հիմնավորում էին նրանով, որ սկզբունքորեն անհնար է պարզել մարդու կրած բարոյական վճարի չափը՝ դրամական տեսքով:

ԱՌՏԻԿԼ 19 միջազգային հասարակական կազմակերպության մշակած «Զրպարտության նորմերի սահմանումը» խոսքի ազատության և անձի հեղինակության պաշտպանության սկզբունքները» ուսումնախրության մեջ՝ որպես 14-րդ սկզբունք նշվում է, որ «Դատարանները պետք է առաջնահերթ խնդիր դարձնեն բարոյական վճարի փոխհատուցման բայր հնարավոր միջոցների կիրառմանը անձի հեղինակությանը հասցված վճարի փոխհատուցման համար»: Նշվում է, որ բարոյական վճարի փոխհատուցման միջոցներն ավելի քույլ ազդեցություն ունեն տեղեկատվության և գաղափարների ազատ հոգի վրա, քան նյութական վճարի փոխհատուցման միջոցները, նաև՝ միևնույն ժամանակ կարող են արդյունավետ միջոց լինել անձի հեղինակությանը հասցված վճարը փոխհատուցելու համար: Կարևի 1, կիրառել նաև այլ պակաս փոանգավոր ներդրություն ունեցող միջոցներ, ասենք՝ ներդրություն խնդրելոր, հերքում կամ պատասխան հրապարակելոր: 15-րդ սկզբունքում նշվում է, որ նյութական վճարի փոխհատուցումը պետք է կատարել միայն այն դեպքում, եթե բարոյական վճարի փոխհատուցման միջոցները բավարար չեն վճարի ամբողջական փոխհատուցում կատարելու համար<sup>2</sup>:

Մեր կարծիքով, ՀՀ օրենսդրությունը պետք է ներառի բարոյական վճար հասկացությունը, միաժամանակ սահմանելով, որ այն ենթակա է փոխհատուցման, անկախ նրանից՝ մարդու կրել է նյութական վճար, թե ոչ: Սա կարող է ունենալ միայն դրական ազդեցություն՝ կատարելով իրավախախտումների կանխարգելման գործառույթ:

## Մարդու պատվի եւ արժանապատվորյան պաշտպանության քրեական կազմական կարգավորումը

ՀՀ-ում գրադարանունը և վիրավորանքը քրեարի պատմելի արարք են համարվում: Զրպարտությունը և վիրավորանքը կարգավորվում են նոր Քրեական օրենսգրքի 135-րդ, 136-րդ և 318-րդ հոդվածներով:

Համաձայն 135-րդ հոդվածի՝ գրադարանունը է «Ուրիշի պատիվն ու արժանապատվորյունը նվազագույնը կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը», որի համար նախատեսվում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հիմգիարյուրապատիկի շափուկ: Նոյն հոդվածի երկրորդ կետով սահմանվում է, որ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ, պատմվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապատիկի շափուկ կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Զրպարտության դեպքում պետք է, առկա լինեն հետևյալ հանգամանքները.

1. Հանցավորը մեկ որիշին մեղադրում է, կոնկրետ արարք կամ արարքներ կատարելու մեջ: Օրինակ՝ նախարարը կաշառք է վերցրել, վատուկ և, վարկային գումարները և այլն: Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ այդ փաստերը կամ արարքները, որոնցում մեղադրվում է, տուժողը, լինեն արատավորող:

2. Երկրորդ հանգամանքն այն է, որ տեղեկությունները պետք է, չհամապատասխանեն իրականությանը: Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե տարածված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, նույնիսկ եթե դրանք ստորագրում են մարդու պատիվն ու արժանապատվությունը: Անձն ազարտվում է քրեական պատասխանատվությունից նաև այն դեպքում, եթե տեղեկություններն արատավորող չեն, բայց նաև չեն համապատասխանում իրակա-

նույթանը:

3. Արատավորող տեղեկությունների կեղծ, սուս լինելը պետք է ակնհայտ լինեն տարածողի համար: Զրպարտության հանցակազմի առկայության համար պարտադիր է, որ արատավորող տեղեկություններ տարածող գիտակցած լինի, որ դրանք կեղծ են. չեն համապատասխանում իրականությանը. այսինքն՝ նա պետք է գործած լինի դիտավորությամբ, իսկ եթե դրանց կեղծ լինելը ակնհայտ չի լույս իր համար, ուրեմն տարածողը չի կարող նմանակվել քրեական պատասխանատվության:

4. Արատավորող տեղեկությունները պետք է վերաբերեն կոնկրետ անձի կամ անձանց:

5. Տեղեկությունները պետք է տարածված լինեն որևէ եղանակով:

ՀՀ Քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը սահմանում է վիրավորանքը հետևյալ կերպ. «Ուրիշի պատիվն ու արժանապատվությունը անպարկեշտ ձևով ստորագրենք»: Այս գործողությունները պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի շափով:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուամյուրապատիկից ութհարյուրապատիկի շափով:

Վիրավորանքի բնույթն այն է, որ հանցավորը տուժողին տալիս է այնպիսի բացասական գնահատական, կազմում է այնպիսի պիտակ, որը նսնացնում է նրա պատիվն ու արժանապատվությունը: Վիրավորանք հասցնողը դիտավորյալ հասարակության աշքում նսեմացնում է տուժողի հեղինակությունը: Պետք է նկատի ունենալ, որ վիրավորանք հասցնելու դեպքում ամենաին կարող չէ, որ տուժողին ողղված բացասական գնահատականը համապատասխանի իրականությանը:

Դիտավորությունը պարտադիր հանգամանք է վիրավորանքի հանցակազմի համար: Հանցավորը պետք է տվյալ դեպքում ոչ միայն գիտակցի, որ իր

կատարած գործողությունները ուժահարում են ուրիշի հեղինակությունը, այլև ցանկանա ստորագնել, այս դեպքում միայն կարող է առաջանալ քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտություն: Վիրավորանքի պարտադիր հատկանիշ է՝ պատվի, արժանապատվության ստորագման անպարկեշտ ձևը: Նշենք նաև, որ վիրավորանքը կարող է տարածվել ոչ միայն տպագիր եղանակով, այլև արտահայտվել կոնկրետ գործողությամբ, օրինակ՝ ապտակով, տարրեր ժեստերով և այլն:

Կարենը է նշել նաև, որ եւ գրագրատության, եւ վիրավորանքի դեպքում հարկավոր է, որ արատավորող արտահայտություններն արված լինեն կոնկրետ անձի կամ անձանց հասցեին: Ընդհանուր բնույթի, անորոշ անձանց հասցեին արված արտահայտությունները չեն կարող գրպարուչական կամ վիրավորական համարվել:

Ներ համոզմանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 318 հոդվածը՝ «Խշանության ներկայացուցչին վիրավորելը», լուրջ վտանգ է ներկայացնում, սահմանափակելով մարդու ազատ արտահայտվելու իրավունքը, ինչպես նաև՝ ուղղակիորեն հակառակ է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներին և Եվրոպական դատարանի ձևավորած սլրակտիկային:

Օրենսգրքի 318-րդ հոդվածում նշվում է.

1. Խշանության ներկայացուցչին իրապարակայնորեն վիրավորել՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի շափով կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապա-

տիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

ԱՊՀ գրեթե բոլոր երկրների, ինչպես նաև Եվրոպական պետությունների քրեական օրենսգրքերը ներառում են դրույթներ՝ որոնցով պաշտպանվում են իշխանության ներկայացուցիչների պատիվն ու արժանապատվությունը: Սակայն, Հայաստանի Քրեական օրենսգրքի 318 հոդվածը նախատեսում է ավելին, քան՝ միայն իշխանության ներկայացուցիչ պատիվն ու արժանապատվությունը՝ ծառայողական պարտականություններին առնչվող վիրավորանքից պաշտպանելը:

318 հոդվածում՝ «Իշխանության ներկայացուցիչ» հասկացությունը սահմանված չէ, ինչը բույլ չի տալիս հստակեցնել դրույթի գործածության շրջանակները: Պարզ չէ նաև, արդյո՞ք հոդվածում հաշվի է առնվել իշխանության ներկայացուցիչն վիրավորական խոսքերից պաշտպանելը անմիջապես իր ծառայողական պարտականությունները կատարելու պահին, թե՞ ընդհանրապես, ցանկացած իրավիճակում իշխանության ներկայացուցչի հանդեպ բույլ արված իրապարակային վիրավորական արտահայտության դեպքում:

Եթե առաջին պնդումը ճիշտ է, ապա հոդվածի լրացուն պետք է ավելի ճշգրիտ լիներ: Եթե 318 (1) վերաբերում է ցանկացած իրավիճակում պետական պաշտոնյային ուղղված վիրավորանքին, ապա կասկածի տակ է դրվում 318 (1) հոդվածի ամրող իմաստը, քանի որ Քրեական օրենսգրքում արդեն խև գոյություն ունի 136 հոդվածը: Այսպիսով, եթե 318 (1) մասը չի վերաբերում իշխանության ներկայացուցիչ՝ իր ծառայողական պարտականությունները (անմիջական) կատարելու պահին հասցված վիրավորանքին, ապա 318 (1)-ը ոչ միայն չի արդարացվում, այլ նաև՝ հակասում է հաստատված միջազգային չափանիշներին, ըստ որոնց՝ արգելվում է իշխանության ներկայացուցիչների համար սահմանել պաշտպանվածության ավելի բարձր աստիճան:<sup>3</sup>

ԱՐՏԻԿԼ 19 միջազգային հասարակական կազմակերպությունն իր մշակած «Խոսքի ազատու-

թյան և անձի ինլինակության պաշտպանության սկզբունքները» գրում որպես 2-րդ սկզբունք նշում է «զրապարտություն սահմանող նորմերի իրավաչափի նախատակը»:<sup>4</sup> Մեկնարանվում է, որ զրապարտություն սահմանող նորմերը չեն կարող արդարացված լինել, եթե դրանք նպատակ ունեն արգելել պետական պաշտոնյայի հասցեին ցանկացած քննադատություն, կամ բույլ չտալ պետական պաշտոնյայի սխալ գործեղակերպի կամ կաշառվածության փաստի բացահայտում:<sup>5</sup> Սակայն գործնականությունը, գրապարտություն սահմանող նորմերը սովորաբար կիրառվում են լայն հասարակական քրնարկումներն արգելելու կամ պետական պաշտոնյայի սխալ արարքների վերաբերյալ քննադատությունը կանխվելու նպատակով, ինչին էլ և ուղղված է ՀՀ Քրեական օրենսգրքի 318 հոդվածի բովանդակությունը:<sup>6</sup>

Փաստորեն, Քրեական օրենսգիրքը՝ վիրավորանքի դեպքում պետական իշխանության ներկայացուցիչներին առավել մեծ պաշտպանություն կանխվելու նպատակով, ինչին էլ և ուղղված է ՀՀ Քրեական օրենսգրքի 318 հոդվածի բովանդակությունը:

Փաստորեն, Քրեական օրենսգիրքը՝ վիրավորանքի դեպքում պետական իշխանության ներկայացուցիչներին առավել մեծ պաշտպանություն է ապահովում, քան սովորական քաղաքացիներին, մի բան, որն անընդունելի է և ուղղակի հակասում է Եվրոպական դատարանի մի շարք այլ որոշումներին: «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» գործով 1986 թվականին ‘Խատարանը նշել է, որ «քաղաքական գործիչների առնչությամբ քննադատության սահմաններն ավելի ընդարձակ են, քան՝ մասնավոր անձի: Ի տարրերություն վերջինիս, առաջինը պետք է մեծագույն հանդուժողականություն ցուցաբերի իր յուրաքանչյուր խոսքի ու գործողության հանդեպ՝ լրագրողների լուրջ ուշադրության նկատմամբ»<sup>7</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ պետական պաշտոնյաները պետք է ավելի հանդուժող լինեն հասարակական քննադատության հանդեպ, նույնիսկ այն դեպքում, եթե այն վիրավորելու միտում ունի: Բերենք օրինակ՝ 1997 թ.-ին «Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի» գործով դատարանը որոշեց, որ բեւ քաղաքական գործին իրապարակայնորեն ապուշ անվանելը

կարող է նրան վիրավորել, այդ բառն այնուամենայնիվ, համաշափ է Հայդելի գիտակցարար արտահայտած տեսակետին: *10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն արտահայտված մտքերն ու տեղեկատվորյունը, այլ նաև դրանց արտահայտման ձևը:* Այսպիսով, թեև որոշակի դեպքերում իշխանության ներկայացուցչի պաշտպանությունը կարող է արդարացված լինել, այնուամենայնիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 318 հոդվածը հակասում է Մարդու իրավունքների Նվյուպական դատարանի կողմից հաստատված և բազմիցս կիրառված սկզբունքներին:

Իշխանավորների, պետական պաշտոնյաների մասին կարծիքներ արտահայտելու ազատությունը (որքան էլ դրանք տհաճ, ոչ ճիշտ, վատ ձևակերպված լինեն) ժողովրդավարական սկզբունքների անկյունաքարն է: «Արտիկլ 19» կազմակերպությունն իր մեջնաբանություններում նշում է, «Պետական պաշտոնյաներն ավելի մեծ հանդուժողա-

կանությամբ պետք է վերաբերվեն քննադատությանը: Այստեղից բխում է, որ պետական պաշտոնական իատուկ պաշտպանվածություն տրամադրելով, խախտվում է այս սկզբունքը»: Այսպիսվ՝ քրեական օրենսգիրքը ոչ միայն չի ապահովում խոսքի ազատության պաշտպանություն, այլև առավել լուրջ խոչընդոտներ է առաջացնում խոսքի և մամուլի ազատության համար:

Ընդգծենք նաև, որ վիրավորված մարդք միշտ պետք է իր պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու ձևերի ընտրության հնարավորություն ունենա՝ հատկապես մինչև դատարան դիմելը՝ եթիկայի հանձնաժողովներում, մամուլի խորհրդական ներում, խմբագրություններում: Եթիկական կանոնագրերի ընդունումը մամուլի ինքնակարգավորման, նաև ինքնապաշտպանության լավագույն ձևն է, որը, ցավոք, հայաստանյան ԶԼՄ-ը դեռևս չեն գիտակցում:

<sup>1</sup> www.coe.int:

<sup>2</sup> www.article19.org:

<sup>3</sup> www.media.am:

<sup>4</sup> www.article19.org:

<sup>5</sup> Տես Ֆելիքս Բնիքելմ Սլովակիայի դատական գործը, 2001թ. կետ 87:

<sup>6</sup> Сборник стандартов по свободе убеждений, Артикль 19, Лондон, 2003, с. 14-20.

<sup>7</sup> Տես, օրինակ, Եվրոպական դատարանի հետևյալ որոշումները՝ «Լուսես Գոմես դե Միլվաս ընդդեմ Պորտուգալիայի», 2000թ.: «Ֆելիքս Անդրես Սլովակիայի», 2001թ., «Թոման Անդրեմ Լյուբսեմբրուգի», 2001թ., «Կոլմրանին ընդդեմ Ֆրանսիայի», 2002թ. և այլն:



## ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆ

Ռուս-Հայկական (Ալավոնական) պետական համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի քաղաքական գործընթացների և տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեսչության թեկնածու

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

**Հ**այաստանի հասարակական-քաղաքական կյանքին և իրավահարաբերություններին անդրադառնալիս՝ քաղաքական գործիշներն ու վերլուծաբանները հաճախ օգտագործում են «անցումային շրջան» արտահայտությունը և բոլոր դժվարությունները վերգրում այդ փուլին: Բանն այն է, որ դեռևս չի խոսվում անցման ավարտի ժամկետների և դրա գնի մասին:

Որքան էլ որ Հայաստանում թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական համակարգերը հիմնականում կենտրոնացված են և կրում են մենաշնորհային քնույթ, համարվում խիստ ամուր, մեր կարծիքով, նորիամակարգային պայքարն անխուսափելի է, և դա կհանգեցնի պետական համակարգի որակական փոփոխության: Պարագոքավն այն է, որ մեզանում ժողովրդավարական համակարգի հաստատմանը կնպաստեն ոչ ժողովրդավարական (ոչ շուկայական) արժեքների կրողները: Զգզալով արտաքին լուրջ դիմադրություն (հասարակության և ընդդիմության կողմից՝ խոշոր տնտեսաքաղաքական կապիտալի կրողները ժամանակի ընթացքում ավտոմատ կերպով կապարեն միջանակ դեմ, որպեսզի մեծացնեն իրենց ազդեցության ոլորտները: Այլդումքում՝ համակարգն ինքնըստինքյան կրացվի հասարակության առջև՝ միջկանային պայքարում ներգրավելով նոր անդամների (հասարակության պրոֆեսիոնալ հատվածին, որոնք չեն կարող լիազությալ կուտակել և բաշխման հարաբերություններում կարող են առաջարկել միայն սեփական իմական կապեկտ-կապիտալը): Հաճրային կյանքի փոփոխությունների շղթայական կապը կարող է ունենալ հետեւյալ տեսքը.

սեփականատիրոջ և մենաշնորհի տարանջատում,

քաղաքակիրթ երկխոսություն մենեցմենքի և վարձու աշխատողների միջև,

եռակողմ համաձայնագիր՝ կառավարության, սեփականատեր-մենեցերների և արհմիությունների միջև,

տնտեսության ապամենաշնորհայնացում,

դատական համակարգի անկախացում գործադիրից:

իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի լիարժեք տարանջատում:

### Ի ԱՂՋՐԱՆԵ ԿԱՎԻՄԱԼԻ ԷՐ

Նորանկախ Հայաստանի հասարակական գարզացումները կարելի է բաժանել 3 փուլ՝

1. կապիտալի նախնական կուտակման կամ «վոլգար» կապիտալիզմի փուլ,

2. կրանա-օլիգարխիկ կապիտալիզմի փուլ (կապիտալի գերկենության և բազմապատկում),

3. վարչա-բյուրոկրատական կամ չինովանիկական կապիտալիզմի փուլ (կապիտալի պահպանում):

Մի շարք հայտանիշներ հաշվի առնելով՝ որոնց մասին դեռ կխսունք, մենք այժմ թևակովսել ենք վերոնշյալ 3-րդ փուլը: Հետարքրական է, որ յուրաքանչյուր հաջորդ փուլ մտնելիս, ընդունվել է իշխանական ոչ ֆորմալ հարաբերությունները ֆորմալիցացնող Սահմանադրություն:

Առաջին փուլում (կապիտալի նախնական կուտակում) տեղի էր ունենում անցում պետական սեփականությունից մասնավորին: Ոչ ֆորմալ հարա-

թերությունները գերակայում էին ֆորմալին: 1995 թվականի Սահմանադրությունը և կազմակերպությունը ստիրող փաստացի իրավիճակը, հզոր նախագահական ինստիտուտ, գործադիր և դատական իշխանությունների սերտաճում ու 2-րդի կախվածություն առաջինից, ինչպես նաև՝ գործադիրի կցորդ օրենսդիր մարմին: Տեղական ինքնակառավարման համակարգն արդեն զուտ ձևական բնույթ էր կրում, քանի որ ֆինանսական ամբողջ կարկանդակը վերին օղակներում էր բաշխվում: Իշխանական կառուցվածքի նմանօրինակ պայմաններում բնական էր, որ պետք է խորանար բիզնեսի և քաղաքականության սերտաճումը: Հասկանալի էր նաև այն, որ տնտեսա-քաղաքական կապիտալի կրողները չէին զիջի իրենց դիրքերը: Արդյունքում՝ մեծամասնությունը, դուրս մնալով մեփականության բաշխման գործընթացներից, զրկվեց քաղաքական և իրավական բռնություններին դիմադրելու ինունային համակարգից: Իսկ հասարակությունը քաղաքացիական իմունային համակարգից զրկվում է այն դեպքում, եթե նրա մեծ մասը՝ նվազագույն կենսաապահովման համար անհրաժեշտ սոցիալական պաշտպանվածություն չունի, ինչպես նաև՝ բավարար ֆինանսական խնայողություններ, և, հետևաբար, չի կարողանում մասնակցել քաղաքական գործընթացներին՝ որպես լիիրավ սուբյեկտ:

### **Մեփականության վերաբաշխման ուրվականը և լեզվափոխական գննաժամը**

Անցումային ժողովրդավարության հասարակությունում մշտապես առկա է սեփականության վերաբաշխման վտանգը: Այս ամենով պայմանավորված՝ կարելի է պնդել, որ մեզանում սոցիալական դեմագոգիան և պոպուլիզմը մշտապես պահանջված քաղաքական վարքագծերից են, և հասարակությունը կուրորեն կզնա այն ուժերի հետևից, որոնք իրենց գինանոցում ունեն նշված մոտեցումները: Այլ հարց է, որ ժողովուրդը դրանից չի կարող օգտվել:

Շատ է խոսվում այն մասին, որ սկսած 1995-ից՝ իշխանություններն ունեն լեզվափոխական խնդիր-

ներ: Խնդիրն ընտրական համակարգի մեջ չէ: Պետք չէ լեզվափոխունը շփոթել լեզվափոխական հետ: Լեզվափոխական թեմայով վերերյան դասական իշխանության մեջ հուշում է դրա արտահայտման ձևը վնասության մեջ: Եթե համակարգն ընդունելի է, ապա ընդունելի կիմի նաև իշխանությունը: Իսկ համակարգը, նախ և առաջ տնտեսական և իրավական հարաբերություններն են, հետևաբար, իշխանության լեզվափոխական գննաժամը տնտեսական համակարգի անընդունելիությամբ և իրավահարաբերությունների ոչ բավարար մակարդակով է պայմանավորված, և շատերի կարծիքով՝ նախ պետք է հաստատել տնտեսական ժողովրդավարություն ու ապակենտրոնացված իշխանություն:

Քաղաքական լեզվափոխական գննաժամի առկայության պատճառա-հետևանքային կազմը կարելի է ներկայացնել հետևյալ կերպով: 1. սեփականության լեզվափոխական գննաժամ, 2. սեփականատիրոջ լեզվափոխական գննաժամ, 3. սեփականատիրոջ և քաղաքական իշխանության նույնացում հասարակական գիտակցության մեջ, 4. քաղաքական իշխանության լեզվափոխական գննաժամ:

Մարդկանց իրավունքների ուսնահարումը սկսվում է աշխատանքային իրավունքի ուսնահարումից: Տնտեսապես շպաշտապանված հասարակության համար լեզվափոխական գննաժամը յինել «օրինական» ճանապարհով:

### **Արմատական ընդդիմություն և արմատական իշխանություն**

Այսպես՝ արյի հասարակական համակարգը կարելի է բնութագրել որպես տնտեսա-քաղաքական լեզվափոխական գննաժամ ունեցող համակարգ: Այս պայմաններում ամեն մի իշխանություն կձգտի պահպանել իր դիրքերը, այլապես՝ կզրկի սեփականությունից: Բնական է, որ ընտրական գործընթացները լուրջ փորձություն են դառնում և իշխանության, և ընդդիմության համար: Փաստ-

ոեն, ընտրական պայքարը ընդդիմության համար հաճախ լրացնում է «հիմա կամ երեք» կարգախոսով, իսկ իշխանության համար՝ «ահ կամ իշխանություն»:

Որքան արմատական դիրքերից է հանդես գալիս ընդդիմությունը, այնքան արմատական է դառնում իշխանությունը: Պայքարում, որպես կանոն, շահում և տվյալ պահի իշխանությունը, քանի որ տիրապետում է ֆինանսական, ուժային, վարչական և տեղեկատվական ռեսուրսների:

Խոսեմք չորրորդ իշխանության մասին, կայացող ժողովրդավարության երկրներում իշխող տժը հաշվի չի նստում ԶԼՄ-ների հետ և միևնույն ժամանակ ձգում է իր ազգեցության տակ պահել այդ համակարգը: Դրա օրինակներին մննք հանդիպել ենք նախկին ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետություններում: Վերափոխումների «երրորդ ալիք»-ին ձգողող երկրներն առայժմ պատրաստ չեն քաղմարներ լրատվական դաշտ ունենալուն: Իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերը, կառավարվելով մեկ կենտրոնից, չեն կարող հանդուժել բազմաքետ լրատվական դաշտ: Տնտեսաքաղաքական մեջանորիր հանգեցնում է նաև տեղեկատվական մեջանորիր առաջացմանը նախ և առաջ հեռուստատեսության ասպարեզում՝ որպես ամենամասսայական ԶԼՄ-ի: Հեռուստադաշտի վերահսկողությունն իշխանության համար ունի խիստ գործնական նշանակություն, ինչպես տեսանք, Նարնջագույն, Վարդագույն հեղափոխություններն իրականացվեցին նաև հեռուստատեսության միջոցով: Հեռուստատեսության դերն այստեղ պետք չէ գերազանահատել, քայլ թերագնահատել նույնպես չարժե: Ի դեպ, հետաքրքրական է, որ Կ Վրաստանում, և Ռուսականաց իշխանափոխությանը հաջորդեց սեփականության վերանայման գործընթացը, ինչը, գալիս է հաստատելու մեր այն առանձակետը, որ անցումային երկրներում իշխանության համար պայքարն իր խորքում կրում է նաև կապիտալի վերաբաշխման երևոյթներ, և այս առումով, քաղաքական ուժերը պետք է լուծումներ

գտնեն:

### **Երջանկության մեխանիկա**

«Ի՞նչ անել» դասական դարձած հարցադրումը լրջորեն հուզում է հասարակությանը: Կան տարբեր վերլուծություններ և ուսումնասիրություններ այն մասին, թե երր և ինչպես կարելի է հաղթահարել անցումային շրջանի դժվարությունները և այդ շրջանը համարել ավարտված: Աներիկացի քաղաքացւությունը գտնում է, որ ժողովրդավարական անցումը կարևոր է ավարտված համարել, եթե երկու անգամ անընդմեջ օրինական ընտրություններով իշխանափոխություն է տեղի ունենում: Կան նաև այլ տեսակետներ: Հայաստաճի դեպքում՝ Սահմանադրությունների փոփոխմանը որևէ բան գրեթե չի փոխվի, եթե հասարակության մեջ իմունային համակարգը շվերականացնվի: Իսկ պարզելու համար, արդյո՞ք առաջացել է հասարակական դիմադրողականության համապատասխան վիճակ, անհրամեշտ է դիմել որոշակի ինտիկատորների: Այդ ինտիկատորները կիուչևուն համակարգի առողջացման մասին դրանք են.

1. տնտեսական ժողովրդավարացում,
2. քածնետիրական կառավարման կուլտուրայի առկայություն,
3. արհմիութենական շարժում (Եհական «Սովորանուատի» բնույթի, բայց արդեն հայաստանի իրողությունները հաշվի առնելով և շուկայական ուղղվածություն որդեգրելով),
4. աշխատանքի առկայություն և աշխատավորների շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ համակարգի առկայություն:

Անցումային տնտեսության տեսարանները կարծում են, որ անհրաժեշտ է հասարակական, քաղաքական, տնտեսական խոշոր պակտ (գրված կամ չգրված), ըստ որի, քաղաքական բոլոր ուժերը, խոշոր տնտեսվարողները պետք է մի քանի կետերի շուրջ գանձ ընդհանուր համաձայնության և հետագայում ձգտեն համաձայնության մեջ ներգրավել նաև հասարակության մեծամասնությանը: Պակտի առկայությունը ոչ թե հանրային կյանքի գար-

գացման իդեալական պատկերացում է, այլ շատ պրազմատիկ (շահեկան) մողել, նախ և առաջ, խոշոր կապիտալի համար (իրենք կորցնելու բան ունեն):

Պակտն իր մեջ պետք է ներառի հետևյալ սկզբունքները.

1. սեփականության վերանայման բացառում,
2. պետության սոցիալական պատասխանատվության ամրագրում ՀՀ բոլոր քաղաքացիների առջև,

3. խոշոր կապիտալի լեզվացում և լեզվացման արդյունքում հարկային համաներնան օրենսդրական կրաշխիքներ՝ հետագա հարկային քաղաքականության ազատականացման պայմանվ,

4. աշխատավորների շահերի պաշտպանության գործուն մեխանիզմներ և արհմիությունների ինստիտուցիոնալ զարգացում:

Անշուշտ, նշված կետերը լիարժեք չեն, սակայն, մեր կարծիքով, դրանք այն խաղի կանոնակայացման մեջ ներառի պետություն կտան մեզ թևակոխել պետության զարգացման որակապես նոր վոլու: Այլապես անհամար է, որ ծայրահեղ սոցիալական լինեացում ունեցող երկրում պաշտպանվի մարդու և բաղաքացու իրանցունքը կամ այլ խոսրով, հաստատվի քաղաքական ժողովրդավարություն: Ժողովրդավարությունը սկսվում է տնտեսական հարաբերություններից: Սոցիալական խնդիրներ ունեցող հասարակությունն այնքան էլ մտահոգված չէ խոսքի ազատության իրավունքով, հետամուտ չէ պաշտպանելու իր ընտրելու իրավունքը և այլն:

Հասարակության մեծամասնությունն այն կարծիքին է, որ խոսքի ազատությունը, ընտրության իրավունքը, մեզանում ձևավորված համակարգի առջև ծառացած ածանցյալ մարտահրավերներ են: Նախ պետք է հաստատել տնտեսական ժողովրդավարություն և ապակենտրոնացված իշխանություն. դրան գուգահելու կզարգանան նաև քաղաքացիական ինստիտուտները:

#### **Գրականություն**

1. «Հահմանադրություն, ընդունված 1995թ. հունիսի 5-ին»:
2. «Հահմանադրություն (փոփոխություններով) ընդունված 2005թ. ի նոյեմբերի 27-ին»:
3. Մարգարյան Մ. «Քաղաքական լիդերություն», «Պետական ծառայություն», Եր., 2001:
4. Մարգարյան Մ. «Քաղաքական բնապահին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները ՀՀ-ում», «Պետական ծառայություն», Եր., 2006:
5. Մարգարյան Մ. «Քաղաքական արդիացման և զարգացման հիմնահարցեր», «Պետական ծառայություն», Եր., 2004:



## ԹԱՄԱՐԱ ՇԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության  
նախարարի խորհրդական

### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀՐՑԵՐ

Շուկայական հարաբերությունների գարգացմանը զուգընթաց արդիական և դատում նաև իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրը: Ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության անկատարության պարագայում, դեռևս բավարար շափով լուծված չեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցերը, իսկ իրավական ակտերում բացակայում է «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն» հասկացությունը. դա բխում միայն կոնկրետ իրավական ակտերից: Այսպես, իրավական ակտերով սահմանված են որոշակի իրավախախտումների դեպքում իրավաբանական անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ: Օրինակ՝ տնտեսական մրցակցության, արժութային կարգավորման և արժութային վերահսկողության, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ են սահմանված համապատասխանարար՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով<sup>1</sup>: Ներկայումս նրանք հանդես են գալիս որպես վարչական պատասխանատվության սուբյեկտներ՝ նաև հոդային, շինարարության, մարսային, հարկային, սոցիալական ապահովագրության, բնուրյան ու շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերով:

Թերեւս, հարկ ենք համարում նշել, որ իրավա-

բանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող բազմաթիվ իրավական ակտերում, այնուամենայնիվ, հստակ չեն սահմանվում նաև այն իրավախախտումները, որոնք հիմք են հանդիսանում նրանց վարչական պատասխանատվության համար: Բնորոշ է նաև այն, որ իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերը դասակարգված են բատկառավաճան ոլորտների, ինչի արդյունքում կամ դրանք անհարկի կրկնում են միմյանց, կամ պարունակում են անհարկի հակասություններ:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցը տեսական և գործնական քննարկման լայն առարկա է դարձել և բավականին խորն ուսումնասիրվել է շատ ու շատ գիտնականների կողմից, այնուամենայնիվ, այս պատասխանատվության ինստիտուտի կիրառման շրջանակներում սուբյեկտի առումով դեռևս չի ձևավորվել միասնական մոտեցում: Դեռևս վիճելի է այն հարցը, թե ոչ, և դրա հետ կապված ծագում են նաև բազմաթիվ հարցեր, ինչպիսիք են՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը, մեղքը և այլն: Գիտնականների մի մասը գտնում է, որ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդես են գալիս բացառապես ֆիզիկական անձինք (քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրացիները, պաշտոնատար անձինք և այլն)<sup>2</sup>, իսկ մյուսներն ել այն կարծիքին են, թե որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդես

են գալիս նաև իրավաբանական անձինք<sup>3</sup>:

Ինչպես զիտենք, գրականության մեջ վարչական իրավախախտումը բնութագրվում է՝ որպես հակաիրավական, մեղավոր գործողություն կամ անգործություն, որի համար օրենսդրությանը նախատեսված է վարչական պատասխանատվություն: Ուստի զանցանքների սուբյեկտիվ կողմից պարտադիր տարր է համարվում մեղքը, այսինքն՝ անձի հոգերանական վերաբերմունքը կատարված իրավախախտման նկատմամբ: Հենց այս պարագայում է, որ խիստ վիճարկելի է դառնում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հարցը, քանզի մեղքը, որպես անձի հոգերանական վերաբերմունք կատարված արարի նկատմամբ, նրանց համար չի կարող բնութագրական լինել:

Այսպես, օրինակ, ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում I. հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը (անգործությունը), որի համար սույն օրենսգրքով կամ ՌԴ սուբյեկտների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքներով սահմանված է վարչական պատասխանատվություն: ‘Եթա հետ մեկտեղ, ըստ նույն հոդվածի 2-րդ մասի, իրավաբանական անձը վարչական իրավախախտման համար համարվում է մեղավոր (ընդգծումը մերն է), եթե հաստատվի, որ նա հնարավորություն ուներ հետևելու այն նորմերին և կանոններին, որոնց խախտման համար սույն օրենսգրքով կամ ՌԴ սուբյեկտների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքներով սահմանված է վարչական պատասխանատվություն, սակայն իրենից կախված բոլոր հնարավորությունները նա չի օգտագործել դրանց հետևելու համար<sup>4</sup>: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը մեղավոր է ճանաչվում կատարված իրավախախտման համար, եթե նա պարտավոր էր իրականացնել իր վրա դրված պարտականությունը (որի չկատարման համար օրենքով սահմանված է պատասխանատվություն), սակայն չի իրականացրել, չնայած որ կարող էր:

Ինչպես տեսնում ենք, ՌԴ օրենսդրությամբ մեղքը վարչական իրավախախտման սույնեկտիվ կողմից պարտադիր տարր է համարվում, նույնիսկ նքել այդ իրավախախտումը կատարվել է իրավաբանական անձի կողմից: Ընդ որում՝ իրավաբանական անձինք պատասխանատվության են ենթարկվում անկախ իրենց գտնվելու վայրից, կազմակերպա-իրավական ձեից և այլ հանգանանքներից:

Որոշ երկրների օրենսդրությամբ այս հարցն այլ կերպ է կարգավորվել: Մասնավորապես, Կազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում է համարվում ֆիզիկական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը կամ անգործությունը, նաև իրավաբանական անձի հակաիրավական գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն<sup>5</sup>: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում, ի տարբերություն ֆիզիկական անձանց, իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ներարկելու համար, մեղքի առկայությունը պարտադիր պայման չի համարվում, այլ վարչական պատասխանատվության ենթարկելու բավարար հիմք է համդիսանում միայն արարքի հակաիրավական բնույթը: Կարծում ենք, որ այս մոտեցումն ավելի ընդունելի է, քանի որ մեղքը բաղկացած է կամային և գիտակցական տարրերից, իսկ կամքով և գիտակցությամբ օժտված կարող է լինել միմիայն ֆիզիկական անձը: Հենց այս մոտեցումն էլ անհրաժեշտ է որդեգրել՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նոր նախագիծ մշակելիս:

Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական անձանց համար նախատեսված վարչական պատասխանատվության նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում պայմանափորված են իրավաբանական, կոնկրետ իրավասու պաշտոնատար անձանց կողմից թույլ տված խախտումներով: Ընդ որում, որոշ երկրների օրենսդրությամբ սահմանված է, որ եթե իրավաբանական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում տըլ-

յալ զանցանքի կատարման համար մեղավոր ֆիզիկական անձին և հակառակը, եթե ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում տըլյալ զանցանքի կատարման համար իրավարանական անձին: Այլ կերպ ասած՝ միևնույն իրավախախտման համար չի բացառվում և իրավարանական անձի և համապատասխան պաշտոնատար անձի պատասխանատվությունը: Թերևս, այս մոտեցումն է ամրագրված նաև այն երկրների քրեական օրենսդրությամբ, որոնք նախատեսում են իրավարանական անձանց քրեական պատասխանատվություն:

Իրավարանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տևակները զգալիորեն տարբերվում են ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակներից: Այսպես, նրանց նկատմամբ կարող են կիրառվել հիմնականում տույժի հետևյալ տեսակները՝ նախազգուշացում, վարչական տուգանք, լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում, գործունեության որոշակի տեսակով զրադշելու դադարեցում, գույքի բռնագրավում, իրավարանական անձի լուծարում և այլն:

Ընդ որում, առանձին դեպքերում վարչական տույժեր են նշանակվում ոչ թե կազմակերպության կողմից կատարված, այլ կազմակերպության հետ այս կամ այն կերպ առնչվող իրավախախտման հիմքով<sup>6</sup>:

Ի դեպ, բացառապես իրավարանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի սպառից ցանկ որևէ, օրենսդրական ակտով սահմանված չէ, ուստի դրանց մասին կարելի է հետևություն անել վարչական պատասխանատվություն սահմանող համանուն տարբեր իրավական ակտերի վերլուծությունից:

Ամփոփելով իրավարանական անձանց վարչական պատասխանատվության որոշ հիմնախընդուրքներ՝ կարելի է ընդգծել հետևյալ առանձնահատկությունները՝

1) իրավարանական անձանց պատասխանատվության հիմքում ընկած են ինչպես ընդհանուր քննույթի, այսինքն՝ առանձին ակտեր, որոնք միա-

ժամանակ վարչական պատասխանատվություն են սահմանում և ֆիզիկական անձանց, և կազմակերպությունների համար, այնպես էլ միայն կազմակերպությունների համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտեր<sup>7</sup>.

2) իրավարանական անձանց վարչական պատասխանատվության նմբարկելու համար մեղքի առկայությունը վարչական իրավախախտման սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր չէ, և հաճախ միայն հակահրավական արարքի փաստի առկայությունը համարվում է, բավարար հիմք՝ վարչական պատասխանատվության ենթարկելու համար.

3) իրավարանական անձանց և ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տևակները տարբեր են: Նրանց նկատմամբ կիրառվող տույժի տևակներին արդեն իսկ անդրադարձել ենք.

4) վարչական պատասխանատվության նմբարկելու վարույթը զգալիորեն պարզեցված է: Այն, որպես կանոն, ընթանում է առավել կրծատ ժամկետներով, տույժ նշանակելու մասին որոշում կայացնելու համար հիմք է ծառայում ոչ թե իրավախախտման արձանագրությունը, այլ ստուգման ակտը և այլն<sup>8</sup>:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքում, որը լուրջ բարեփոխման անհրաժեշտություն ունի, բացակայում է իրավարանական անձանց վարչական պատասխանատվության առնչվող դրույթներ: Սակայն նոր օրենսգրքի նախագծում անհրաժեշտ է իրավարանական անձանց նոյնպես ընդուրելի վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում, քանզի մեր երկրում ձեռնարկվում են քայլեր նաև վերջիններիս համար քրեական պատասխանատվություն սահմանելու ողղությամբ՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. գործունեության ծրագրով: Ուստի, կարծում ենք, որ իրավարանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառումը հնարավոր կլինի, երբ արդեն իսկ վերջիններիս համար անրագրված լինի վարչական պատասխանատվությունը անձանական պատասխանատվություն է կատարելու համար:

բյուն:

Ի դեպ, մինչև Վարչական իրավախսախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի ընդունումը, կազմակերպություններին հաւոկապես տուգանքի տեսքով վարչական պատասխանատվության ներքարկելու վերաբերյալ իրավական ակտերն աստիճանաբար վերացվում էին: Այսպես, նախկին ԽՍՀ միության Գերազույն խորհրդի նախագահության 1961թ. հուլիսի 21-ի «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագրով, կազմակերպություններին վարչական պատասխանատվության ներքարկելու ինստիտուտը վերացվեց. նույնաբնույր արարքների համար վարչական պատասխանատվություն սահմանվեց այդ կազմակերպությունների իրավասու պաշտոնատար անձանց համար: Նման նոտեցումն անընդունելի էր այնքանով, որ այլ անձանց՝ հիմնականում ենթակա աշխատողների, անգործության համար պատասխանատվության էր ներքարկվում միայն դեկավար պաշտոնատար անձը, իսկ անմիջական իրավախսախտող խուսափում էր որևէ պատասխանատվությունից:

Հետագայում, կազմակերպությունների վարչական պատասխանատվության վերաբերյալ իրավական ակտերը ընդունվեցին: Ընդ որում, տուգանքից բացի, սահմանվում էին նաև վարչական տույժի այլ միջոցներ (լիցենզիաներից, արտոնագրերից գրկել և այլն):<sup>8</sup>

Իրավագետների մեծ մասը համակարծիք են

նրանում, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առնչվող իրավահարաբերությունների համակարգված օրենսդրական կարգավորումը զգայիրեն կնպաստի վարչական գործերի քննության արդյունավետությանը<sup>10</sup>:

Ավելորդ չենք համարում ևս մեկ անգամ նշել, որ «Վարչական իրավախսախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքի կիրառման բնագավառում ծագող բազմաթիվ խնդիրների պայմանավորված են իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ օրենսգրքում շնախատեսվելու հանգամանքի հետ: Ուստի, կարծում ենք, որ կիրառման բնագավառում առաջացող բազմաթիվ խոչընդուները բացառելու, իմնախմերի իրավական կարգավորման միջոցով վարչական զանցանքների կանչնան, բացահայտման, դրանց կատարմանը նպաստող պայմանների ու պատճառների վերացման, ինչպես նաև վարչական պատասխանատվության միջոցների ազդեցությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, անհրաժեշտ է վարչական իրավախսախտումների վերաբերյալ մշակվող նոր օրենսգրքում նախատեսել նաև իրավաբանական անձանց:

<sup>1</sup>Տես 2000թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Տնտեսական նրգակցության պաշտուամուրյան մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. նոյեմբերի 24-ին ընդունված «Արժուային կարգավորման և արժուային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, 2007թ. հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը:

<sup>2</sup>Տես Советское административное право. Под редакцией Василенко П.Т. М., 1981, с. 243.

<sup>3</sup>Տես АЛЕХИН А.П., КОЗЛОВ Ю.М. Административное право Российской Федерации, 1994, с. 244-246, ПОПОВ Л.Л., ШЕРГИН А.П. Управление. Гражданский. Ответственность. Л., 1975, с. 101.

<sup>4</sup>Տես Նույսատանի Դաշնության վարչական իրավախսախտումների վերաբերյալ օրենսգրքի (2007թ. հուլիսի 24-ի փոփոխություններով և լրացրությունով) 2.1-րդ հոդվածը:

<sup>5</sup>Տես Կազախստանի Վարչական իրավախսախտումների վերաբերյալ օրենսգրքի (2007թ. դեկտեմբերի 19-ի փոփոխություններով և լրացրությունով) 2.8-րդ հոդվածը:

<sup>6</sup>Տես Մասլենիկով Մ.Я. Порядок применения административных взысканий. Тверь, 1995, с. 56.

<sup>7</sup>Տես Գ. Շամիրելյան «Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում», Դասագիրք բուհերի համար/, Երևան, «ԱԱՏ» հրատարկություն, 2007, էջ 98:

<sup>8</sup>Տես նույն տեղում, էջ 98:

<sup>9</sup>Տես նույն տեղում, էջ 96-97:

<sup>10</sup>Տես Բարխաջ. Ա. Административное право. Учебник для вузов. М., Издательство БЕК . 1997, с. 344.

**АИДА ИСКОЯН**

Доцент кафедры гражданского процесса Ереванского государственного университета, кандидат юридических наук

**КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ  
ОБЕСПЕЧЕНИЕ ЭКОЛОГИЧЕСКИХ ПРАВ  
ГРАЖДАН И УСТОЙЧИВОЕ  
РАЗВИТИЕ: ЕВРОПЕЙСКИЙ ОПЫТ**

Состояние окружающей среды к концу XX началу XXI столетия - ее загрязнение в больших масштабах, истощение природных ресурсов и нарушение экологических связей и баланса вызывает тревогу; дальнейшее разрушение окружающей природной среды может иметь необратимые глобальные последствия.

Общепризнано, что охрана окружающей природной среды - одна из важнейших проблем современности. Обсуждению этой проблемы в последние годы придается большое значение во всем мире. Прилагается много усилий, чтобы в интересах всестороннего и, как это отражено в ряде международных правовых актов, устойчивого и экологически безопасного развития общества обеспечить рациональное использование природных ресурсов и охрану окружающей природной среды. Поиски оптимальных решений и оценка значения этой проблемы вызывают широкую дискуссию в мире на самых различных уровнях, в высоких правительственныех, межгосударственных, общественных, неправительственных и международных организациях. Речь, прежде всего, идет о мерах охраны окружающей среды во всех ее аспектах.

Мы уже давно живем в процессе глобализации.

Концептуальное осмысление этого процесса началось еще в конце прошлого века. Эти процессы имеют сложный, комплексный характер и затрагивают основы существования человека, уменьшают многообразие флоры и фауны и т.д.

Вместе с тем процессы глобализации открывают перед личностью, обществом, человечеством невиданные в прошлом возможности, дают принципиально новые инструменты совместных действий во имя защиты общих ценностей и обеспечения устойчивого развития. Никогда еще потребность в эффективной регулятивной системе не ощущалась так остро.

Взаимоотношения общества и природы претерпели значительные изменения и в Армении. Эти изменения можно анализировать с позиции законодательства: с переходом республики на новую модель развития изменились и правовые аспекты регулирования взаимодействия общества и природы. В советское время экономические отношения строились на монопольном праве государственной собственности на землю и другие объекты природы - леса, недра, водные ресурсы и основные средства производства. Законодательство в данной сфере строилось по отраслевому принципу. Ведомства, управляющие природными ресурсами, сами же осуществляли контроль за их рациональным использованием и охраной. Это вызвало серьезные противоречия между плановой экономикой, где государственный план воспринимался как закон и над его исполнением осуществлялся жесткий контроль, и необходимостью рационального использования природных ресурсов. Вследствие этого план действительно был законом и исполнялся любой ценой, а охрана окружающей природной среды и рациональное

использование природных ресурсов оставались не более чем декларацией.

Национальные регулятивные системы в области охраны окружающей природной среды сделали ставку, на уровне конституции, на взаимное сближение, гармонизацию законодательства и творческое использование опыта развитых стран, в частности, Европы. Во многих странах законодательный процесс прямо ориентирован на такие формы работы. Государства стремятся к тому, чтобы, в рамках возможного, международное сотрудничество и право становились частью внутригосударственной нормативной системы. Пример тому положения ст. 6 Конституции РА: «Международные договоры вступают в силу только лишь после их ратификации или утверждения.

Международный договор Республики Армения является частью ее правовой системы. Если ратифицированным международным договором установлены иные нормы, чем это предусмотрено законом, то применяются эти нормы. Международные договоры, противоречащие

Конституции, не могут быть ратифицированы. Нормативно-правовые акты принимаются на основе Конституции и законов и с целью их осуществления».

Армения включилась в общеевропейский процесс в рамках программы «Окружающая среда для Европы». Для стран Европы - общность исторических судеб, близость культурных, правовых и политических традиций создают прочный фундамент для сотрудничества. Сам Евросоюз (ЕС) изначально был построен как правовое сообщество, находящееся на постоянно наращивающемся нормативно-правовом фундаменте.

В зоне ЕС реализовано стремление международного права перейти от установления обязательств государств перед государствами к определению обязательств государств также и перед своими гражданами и любыми другими субъектами внутреннего права.

Начало процесса Европейского сотрудничества в

сфере охраны природы было заложено в Программе «Окружающая среда для Европы» встречей министров в замке чешского министра окружающей среды Йожефа Ваврушека в Добрице (1991). Далее были Люцерн (1993), София (1995). На софийской встрече были приняты «Руководящие принципы участия общественности в процессе принятия решений по окружающей среде». В 23-25 июня 1998 г. в Орхусе (Дания) состоялась 4-ая паневропейская конференция министров по окружающей среде, где был принят окончательный документ, которым и завершился процесс, известный как «Дорога в Орхус».

Ярким примером указанного подхода является Орхусская конвенция ЕС ООН 1998 г. «О доступе к информации, участии общественности и доступе к правосудию по вопросам, касающимся окружающей среды» (Орхусская конвенция). Армения подписала ее на 4-ой министерской конференции.

Конвенция была ратифицирована Арменией 14 мая 2001 г. и, как 16-ая страна, ее ратифицировавшая, способствовала ее вступлению в силу.

Если другие международные конвенции устанавливают ответственность Сторон конвенций перед другими Сторонами, то Орхусская конвенция устанавливает ответственность государства Стороны конвенции перед своими гражданами и иными лицами. Важность Орхусской конвенции как основополагающего международного документа заключается в том, что она способствует развитию экологической демократии, укрепляет связи между защитой, охраной и улучшением окружающей среды и правами человека и, тем самым, способствует устойчивому и экологически безопасному развитию.

В основу Орхусской конвенции заложены решения двух предыдущих конференций ООН по вопросам окружающей среды - Стокгольмской в 1972 г. и Рио де Жанейро в 1992 г. На этих конференциях были приняты Декларации принципов по окружающей среде и Планы действий. Основываясь на указанных принципах,

Орхусская конвенция подтвердила необходимость защищать и сохранять окружающую среду, улучшать ее состояние и обеспечивать устойчивое и экологически безопасное развитие и признала, что адекватная охрана окружающей среды необходима для обеспечения благосостояния человека и осуществления основных прав человека, включая само право на жизнь. Хотя эти документы являются источниками «мягкого» международного права, они весьма значимы. Во-первых, они служат ориентирами для природоохранной деятельности государства; во-вторых, критериями оценки достижений государства в развитии национального экологического права и решении экологических проблем.

В советский период в основном сформировался блок законодательства по охране природы и рациональному использованию природных ресурсов, начало которому было заложено Постановлением Верховного Совета СССР от 20 сентября 1972 г. «Об охране природы и рациональном использовании природных ресурсов».

Выполнение международных обязательств в период советского права было весьма низким. Причинами такого состояния были:

ненадлежащее информированность общества о заключенных международных договорах;

декларативный характер самой внутренней национальной правовой нормы, в частности, в сфере охраны природы;

низкий уровень, а часто и просто отсутствие необходимой базы экономических, правовых, организационных, структурных механизмов для реализации правовой нормы;

совершенно иной смысл участия общественности как один из инструментов реализации правовой нормы (участие в общественных дружинах, общественных инспекциях и т.д.).

Уже в Конституции Союза ССР 1977 г. и Конституции Армении 1978 г. впервые была закреплена статья о необходимости «охраны природы и рациональном использовании природ-

ных ресурсов исходя из интересов настоящего и будущих поколений советских людей». Эта норма была взята из Декларации принципов 1972 г. (Стокгольм).

Если оценивать современный уровень развития экологического законодательства РА в контексте Декларации принципов по окружающей среде и развитию Рио, 1992 г., то пока полноценно не узаконена концепция устойчивого развития. Эта концепция содержит инструментарий, методические основы для последовательного решения экологических проблем в контексте устойчивого развития.

С точки зрения оценки достижений РА в формировании экологического законодательства необходимо констатировать, что законодательство в целом уже сформировалось, однако уровень его реализации все еще низок. Нетрудно принять хороший закон, намного труднее обеспечить его эффективное исполнение. Исполнение законодательства - важное направление деятельности всех субъектов экологического права, особенно, государства и бизнес-сектора. В этом можно видеть одновременно условие не только улучшения состояния окружающей среды, но и обеспечения устойчивого развития, реализации права человека на здоровую и благоприятную окружающую среду. Основы законодательства Республики Армения об охране природы (1991) заложили принципиально новый подход к сфере взаимодействия общества и природы. Этот правовой акт был построен на взаимосвязи и взаимозависимости экономических и экологических законов и регулировал эти взаимоотношения юридическими и экономическими методами.

В Основах впервые была предпринята попытка разделить функции управления природными ресурсами и их охраны - дифференциация государственного управления в этой сфере. Основы не могли заменить собою закон об охране окружающей среды, тем более, что в 2007 г. Основы утратили свою силу. И это имеет место тогда, когда

взамен Основ не принят адекватный рамочный закон «Об охране окружающей среды» или Экологический кодекс, т.е. правовая пирамида осталась без своего «головного» закона.

В экологической ситуации, сложившейся в Армении, наиболее острой и социально значимой является задача повышения эффективности экологического законодательства (законодательства в области охраны окружающей природной среды и природопользования) и правоприменительной деятельности (реализация норм права). Часто требования указанного законодательства не выполняются, оставаясь, как и в прошлом, декларативными. Такое положение, на наш взгляд, является следствием отсутствия научно обоснованной экологической политики, заложенной в ранг закона, как это имеет место в наиболее развитых странах, таких, как, например, США, где законодательство в данной области оценивается как одно из наиболее развитых, эффективных и действенных, или в Германии, где оно определяется как конституционное.

В Армении в сфере законодательства по охране окружающей природной среды сложилась парадоксальная ситуация. С одной стороны, принят ряд законодательных и нормативных правовых актов, законодательная техника стала более совершенной (например, наличие в каждом законе понятийного аппарата); шире используется опыт других стран в этой области; ратифицированы международные конвенции по различным аспектам окружающей природной среды, положения которых имплементируются в нормы национального законодательства. С другой стороны, вряд ли можно говорить о целенаправленной и системной законотворческой политике в области охраны окружающей среды, так как все еще четко не сформулированы принципы правовой политики по охране окружающей среды, основные направления и просчитываемые (прогнозируемые) результаты.

По многим параметрам ситуация ухудшается: все более обостряется проблема соответствия ус-

тановленных в правовых нормах правил и поведения, которые эти правила должны были регулировать.

Специальная цель законодательства - обеспечение качества окружающей природной среды: социальные, экономические и экологические аспекты качества среды с точки зрения взаимодействия общества и природы. Именно под конкретные задачи определяются конкретные направления деятельности (функции), которые необходимо осуществить для достижения целей и, следовательно, специальных задач экологического законодательства. Необходимо отметить, что современное экологическое законодательство в Армении в значительной своей части противоречиво, бессистемно, многие его нормы носят отсылочный характер, в нем почти отсутствует механизм реализации требований законодательства в этой области, кроме того, законодательство не приспособлено или недостаточно приспособлено к практическому использованию. Многие нормативно-правовые акты повторяют друг друга по существенным направлениям правового регулирования, причем их применение затруднено разной терминологией при описании одних и тех же правил.

Однако самой существенной проблемой является то, что между принятием закона, регулирующего отношения по использованию и охране окружающей природной среды и последующими шагами исполнительной власти по реализации требований закона (процедура, механизм реализации правовой нормы и т.д.), как правило, существует довольно долгий временной промежуток, измеряемый часто не только месяцами, но и годами. Например, закон РА «Об экспертизе воздействия на окружающую среду», принятый Национальным Собранием 20.11.1995 г. и подписанный Президентом РА 12.12.1995 г. (вступление в силу), закрепил очень ценный, совершенно новый демократический институт участия общественности в процессе осуществления ОВОС (оценка

воздействия на окружающую среду) посредством общественных слушаний (ст. 1, 8, 10, 15), однако процедура проведения общественных слушаний до сих пор не установлена. Проведение общественных слушаний является обязательным, однако, это требование Закона часто не выполняется. За этот период представлено немало профессиональных заключений по оценке воздействия на окружающую среду без проведения общественных слушаний или не по всем его стадиям, что также является нарушением требования закона.

Далее, значительная часть нормативно-правовых актов, в первую очередь, ведомственных актов, труднодоступна. Сам же законодательный процесс в этой области все еще не утратил элементов стихийности.

До сих пор решения как волеизъявление о разработке того или иного нормативно-правового акта в сфере охраны окружающей среды принимаются парламентом, правительством без недостаточного учета научных представлений о системности законодательства в сфере охраны окружающей среды, потребностей общества, особенностей социального и экономического развития и других реальных факторов, но зато под давлением ведомственных, групповых или региональных интересов. Еще более опасно то, что многие предписания, содержащиеся даже в последних законодательных актах, не учитывают современные экономические реалии, что, в конечном счете, ведет к дискредитации Права, его обесцениванию, формированию в обществе атмосферы правового нигилизма. Важное значение имеет оценка воздействия нормативно-правового регулятивного акта RIA (Regulatory Impact Assessment) на его проектном уровне. В ЕС такой подход уже оправдал себя. Армения, стремясь «приблизиться» к европейским директивам, подготовила соответствующие изменения в законе «О правовых актах». Эти изменения касаются ст. 27(1), 28(1), 36(7) указанного закона и затрагивают вопросы сферы экономического, социального и экологического

развития.

Таким образом, большое количество пробелов в правовом регулировании общественных отношений в сфере охраны окружающей среды и природопользования вызывает необходимость разработки пакета новых законов. На наш взгляд, было бы нереально рассчитывать на преодоление такого положения путем принятия «центрального» рамочного законодательного акта - закона «Об охране окружающей природной среды», который до сих пор не принят в Армении или «Экологического кодекса» - имеются и такие предложения. Важно другое. Законодательному процессу в этой области должна предшествовать детальная разработка критерисв, каталога (т.е. перечня правовых средств) реализации экологического законодательства. Такой перечень следует подготовить на основе использования всего своего и международного опыта, особенно европейского законодательства, теоретических и методических разработок, судебной и административно-управленческой практики и проведения специальных социально-правовых исследований. Он должен включать в себя:

- а) обозначения объектов эколого-правового регулирования;
- б) создание единого понятийного аппарата (единая терминология);
- в) разработку составов экологически правомерного и противоправного поведения и его последствий;
- г) разработку круга субъектов экологических правонарушений и процедурных механизмов, детально опосредствующих материальные нормы;
- д) выделение принципов развития (формирования) нового экологического законодательства.

К таковым относятся:

- принцип конституционного развития экологического законодательства;
- принцип кодификации экологического законодательства (акт, завершающий процесс систематизации актов экологического законодательства на период его принятия);

- принцип приоритета законодательного регулирования (первичные правовые нормы могут формулироваться лишь в законодательных актах);
- принцип преемственности (развитие законодательства должно осуществляться преимущественно путем внесения дополнений и изменений в действующее законодательство, а не их замены новыми, с тем же предметом правового регулирования);
- принцип поэтапности кодификации экологического права (принципы отраслевой и межотраслевой кодификации);
- принцип развития экологического законодательства в соответствии с общепризнанными принципами и нормами международного права и международного права окружающей среды.

В качестве основных тенденций развития права окружающей среды законодательства Армении в этой области можно отнести:

- признание экологических прав и обязанностей граждан, гарантий их защиты - реализация положений Конвенции UNECE О Доступе к информации, участии общественности по вопросам, касающимся окружающей среды и доступа к правосудию (Орхусская конвенция);
- усиление превентивной роли права в окружающей среде;
- развитие в условиях рыночной экономики экологического предпринимательства и экологического страхования, т.е. учет экологического фактора в экономических показателях;
- адекватный учет экологического вреда, наносимого здоровью и имуществу человека в результате хозяйственной и иной деятельности;
- необходимость реалистичной оценки потенциального ущерба в экологической экспертизе, экологическом страховании, проектном анализе, инвестиционной деятельности, экологическом аудите;
- совершенствование системы экологических налогов, платежей и штрафов.
